# ԱԶԴԱԿ ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE — أزتاك جريدة يومية سياسية وأدبية

20.000 Լ.Ո. 97-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 212 (26438) ԵՐԵՔՇԱԲԹԻ, 5 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023 8 ԷՋ


## ԻՐԱՆ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՄԷՋ ՆՈՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՒՊԱՏՈՍ ՆՇԱՆԱԿԱԾ Է

Իրան Նախիջեւանի մէջ նոր ընդհանուր հիւպատոս նշանակած է: ԱՓԱ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ ազրպէյճանական լրատուամիջոցները կը հաղորդեն, որ այդ պաշտօնին նշանակուած է Ազիզ Մանսուրին, որ պիտի փոխարինէ Սայետ Ահմետ Հուսէյնին:

Ըստ հաղորդումին, «նոր ընդհանուր հիւպատոսը Թաւրիզի մէջ հանդիպում ունեցած է Արեւելեան Ազրպէյճանի նահանգապետին հետ, յայտարարած, որ պատրաստ է համագործակցելու Արեւելեան Ազրպէյճան նահանգին հետ՝ Իրանի եւ Ազրպէյճանի միջեւ յարաբերութիւններու զարգացման հարցին մէջ»:

*ԱԿՆԱՐԿ*

## ՈՒԱՇԻՆԿԹԸՆԸ, ԱՆԳԱՐԱՆ ԵՒ ՀԱՄԱՍԸ

Համասի հարցով Ուաշինկթըն - Անգարա տարակարծութիւնը թատերական էութիւն ունենալու տպաւորութիւնը կը ձգէ: Միացեալ Նահանգներու ելեւմուտքի նախարարի ահաբեկչութեան եւ ելեւմտական հարցերու տեղեկահաւաքի հարցերով օգնականը Թուրքիա այցելութեան ընթացքին Համասի հետ Անգարայի յարաբերութիւններուն նկատմամբ Ուաշինկթընի խոր մտահոգութիւնը յայտնած էր՝ կոչ ուղղելով, որ Համասի ֆինանսաւորումը շարունակելու պարագային Թուրքիան ծանր հետեւանքներ կրնայ կրել:

Համասի հովանաւոր եռեակը կը բնութագրուի ռազմական ուղղութեամբ Իրանով, ֆինանսական՝ Քաթարով, իսկ գաղափարախօսական՝ Թուրքիայով: Այդ չի նշանակեր անշուշտ, որ Անգարան չէ ֆինանսաւորած Համասը: Ֆինանսաւորման բոլոր փուլերուն իրազեկ էին անշուշտ Միացեալ Նահանգները: Հիմա Ուաշինկթընը հրապարակայնօրէն կը պահանջէ Անգարայէն Համասը ճանչնալ իբրեւ ահաբեկչական միաւոր:

Բնականաբար հարց կը ծագի, թէ մինչեւ այս վերջին պատերազմը թոյլատրելի՞ էին Համասի ֆինանսաւորումները: Ասկէ ետք՝ արտօնուած չե՞ն եւ կրնան ծանր հետեւանքներ ունենալ:

Նոյն պահանջը չի դրուիր Տոհայի դիմաց, որ հիմնականին մէջ գլխաւոր ֆինանսաւորողն է Համասին: Տոհայի նկատմամբ վերապահումներ չկան, արտօնելի չըլլալու յիշեցումներ չեն կատարուիր կամ Համասը իբրեւ ահաբեկիչներու խումբ հրապարակայնօրէն ճանչնալու եւ կապեր խզելու պաշտօնական պահանջներ չեն հնչեր:

Պահանջը աւելի քարոզչական բնոյթ ունի, Թել Աւիւին յղուած ուղերձ կը պարփակէ եւ մաս կը կազմէ Անգարա - արաբական աշխարհ կապը սերտացնելու մարտավարութեան: Կամ՝ Թուրքիոյ ազդեցութիւնը արաբական աշխարհին վրայ ուժեղացնելու նպատակը կը ներառէ: Քաթար-Անգարա կապը եւս հաստատուն կ'երեւի, եւ այդ կապը ամրացնողներուն հիմնականը կը թուի ըլլալ Ուաշինկթընը:

Թուրքիոյ նախագահին պատասխանը ցուցադրականօրէն համարձակ է: Անգարան իր շահերէն մեկնած արտաքին քաղաքականութիւն կը կիրարկէ եւ Համասը կը նկատէ Պաղեստինի մէջ ընտրութիւններ շահած կազմակերպութիւն: Թուրքիոյ նախագահը յոյս կը յայտնէ, որ բոլոր կողմերը կը գիտակցին Թուրքիոյ հաւասարակշիռ քաղաքականութեան ծալքերուն:

Անգարան այս ձեւով պարզապէս կը յայտնէ, որ պիտի շարունակէ հաստատ մնալ Համասը ահաբեկչական միաւոր չնկատելու իր դիրքորոշումին վրայ, եւ կառչած՝ Համասը ֆինանսաւորելու իր որոշումին:

Իսրայէլը ցեղասպան պետութիւն նկատելէ, զայն ամէնէն սուր քննադատութեան ենթարկելէ, անոր վարչապետին ճակատագիրը արդարադատութեան միջազգային ատեաններու մէջ տեսնելէ ետք հետաքրքրական է, որ առ այս պահը չեն խզուած Թել Աւիւի եւ Անգարայի դիւանագիտական յարաբերութիւնները: Չեղեալ չէ յայտարարուած փաստօրէն Թուրքիա - Իսրայէլ ռազմավարական դաշինքը:

Թուրքիոյ ուղղուած Ուաշինկթընի սպառնալիքը հեռու է առարկայացումէ: Այս իրողութիւնը ոչ միայն կապ ունի Թուրքիան հովանաւորելու եւ թրքական ձին միջինարեւելեան դաշտին մէջ վազցնելու ընդհանուր վարքագիծին հետ, այլ նաեւ Իսրայէլի նկատմամբ ամերիկեան քաղաքականութեան շօշափելի փոփոխութիւններուն:

Կը թուի այնպէս, որ ո՛չ իրանեան աջակցութիւնները, ո՛չ քաթարեան միջնորդութիւնները, ո՛չ ալ թրքական ֆինանսաւորումները կ'ըլլան ի հեճուկս Միացեալ Նահանգներու: Այս վարքագիծը կը մշուշապատուի Թուրքիոյ ուղղուած նման կոչերու ծխածածկոյթին տակ:

**«Ա.»**

## *ՍՊԻՏԱԿ ՏՈՒՆ.* «ՆԵՐԿԱՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ Չ'ԱՐՏՕՆԵՐ ԿԱԶԱՆ ՀԱՒԱՍՏԻ ԿԵՐՊՈՎ ԿԱՌԱՎԱՐԵԼ»



Սպիտակ տան ազգային անվտանգութեան խորհուրդի բանբեր Ճոն Քըրպի յայտարարեց. «Պաղեստինեան իշխանութիւնը ներկայիս չի կրնար Կազայի կառավարումը ստանձնել: Անիկա ներկայիս կացութեան մը մէջ է, որ անոր չ'արտօներ Կազան հաւաստի կերպով կառավարել»:

Շար.ը՝ էջ 8

## ՀԱՐԱՒԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԻՆ ՎՐԱՅ ՓՈԽԱԴԱՐՁ ՌՄԲԱԿՈԾՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ



Հարաւային Լիբանանի սահմանագիծին վրայ փոխադարձ ռմբակոծումները երէկ եւս շարունակուեցան Իսրայէլի եւ Հըզպալլայի միջեւ:

Միւս կողմէ, վարչապետի պաշտօնակատար Նեժիպ Միքաթի երէկ ընդունեց Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Տորըթի Շիան, որուն հետ քննարկեց հարաւային Լիբանանի եւ Կազայի մէջ տիրող կացութիւնը:

Իր կարգին, արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարարի պաշտօնակատար Ապտալլա Պու Հապիպ յայտնեց, որ հարաւային Լիբանանի կացութեան

Շար.ը՝ էջ 8

## *ՔԱՄԵՐՈՆ.* «ԵԹԷ ՓՈՒԹԻՆԸ ՈՒՔՐԱՆԻՈՅ ՄԷՋ ՉԿԱՆԳՆԵՑՆԵՆՔ, ԱՆ ԱՒԵԼԻՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԻՏԻ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ»

Բրիտանիոյ նոր նշանակուած արտաքին գործոց նախարար Տէյվիտ Քամերոն յայտարարած է, որ եթէ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինը Ուքրանիոյ մէջ չկանգնեցնեն, ան պիտի վերադառնայ՝ աւելին ստանալու նպատակով: Բրիտանիոյ նախկին վարչապետը այս մասին գրած է բրիտանական «Տը Սան»-ի մէջ հրապարակուած յօդուածին մէջ:

«Դժուար է յիշել ոչ վաղ անցեալին նման վտանգի եւ անորոշութեան ժամանակ», գրած է Քամերոն օրաթերթի կիրակնօրեայ թիւի սիւնակին մէջ:

Քամերոն ըսած է, թէ մարդիկ պէտք է գիտակցին, թէ աշխարհը որքա՜ն փոխուած է:

«Քրեմլինի պատերազմ հրահրողը (Փութինը), աւելի յարձակողական Չինաստանը, իսլամական ծայրայեղականութիւնը կը թունաւորեն երիտասարդ միտքերը, եւ այս բաները մեկ գիշերուան մէջ պիտի չանհետանան», գրած է բրիտանական դիւանագիտութեան պետը:

Ան ընդգծած է, որ այլեւս կարելի չէ աշխարհը վերադարձնել այն վիճակին, որ նախապէս էր:

«Եթէ Փութինին չկանգնեցնենք Ուքրանիոյ մէջ, ան դարձեալ ու դարձեալ պիտի վերադառնայ», ըսած է Քամերոն:

## ՔՈՒՊԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԸ 23 ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ Կ'ԱՅՑԵԼԷ ԻՐԱՆ



Իրանի նախագահ Իպրահիմ Ռայիսի երէկ առաւօտեան Թեհրանի մէջ ընդունած է իր քուպացի պաշտօնակից Միկել Տիազ Քանելը: Այս մասին հաղորդեց իրանեան «Մեհր» լրատու գործակալութիւնը:

Դիմաւորման արարողութիւնը տեղի ունեցած է Թեհրանի հիւսիսը գտնըւող Սաատապատ մշակութային համալիրին մէջ:

Քուպայի նախագահը այցելած է Թեհրան՝ երկուստեք հետաքրքրութիւն ներկայացնող հարցերու շուրջ բանակցութիւններ վարելու Իրանի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ:

Միկել Տիազ Քանելի Թեհրան այցելութիւնը առաջինն է Քուպայի հանգուցեալ նախագահ Ֆիտել Քասթրոյի՝ շուրջ 23 տարի առաջ Իրան կատարած այցելութենէն ետք:

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԵՏԱԻՐԱՒԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԴԷՄ ՔՈՒԷԱՐԿԵՑ «ՀԱՅԱՔՈՒԷ»-Ի ՆԱԽԱԳԻԾԻՆ



Ազգային ժողովի պետական-իրաւական հարցերու մնայուն յանձնախումբի մեծամասնութիւնը դէմ քուէարկեց «Հայաքուէ» քաղաքացիական նախաձեռնութեան օրէնսդրական նախագիծին, որով կ'առաջարկուի քրէականացնել Հայաստանի Հանրապետութեան անունով Արցախը որեւէ այլ պետութեան կազմին մէջ ճանչնալը, ինչպէս նաեւ Հայոց ցեղասպանութեան ճանաչումէն հրաժարիլը, ժխտելը:

Շար.ը՝ էջ 6

## ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԽՍՏՕՐԷՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ՆՈՐ ԼԱՐՈՒԱԾՈՒԹԻՒՆ ՀՐԱՀՐԵԼՈՒ, ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՓԱԿՈՒՂԻ ՄՏՑՆԵԼՈՒ ՊԱՔՈՒԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ




Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարութեամբ խստօրէն դատապարտած է ազրպէյճանական կողմի՝ նոր լարուածութիւն հրահրելու, խաղաղութեան գործընթացը ձգձգելու եւ զայն փակուղի մտցնելու նպատակ ունեցող գործողութիւնները:

«Արմէնփրես»-ի հաղորդումով՝ նշելով, որ 4 դեկտեմբերին Հայաստանի Վայոց ձորի մարզին ուղղութեամբ Հայաստան-Ազրպէյճան պետական սահմանին Ազրպէյճանի զինեալ ուժերը արձակազէնի կրակոցէն մահացու հրազէնային վիրաւորում ստացած է Հայաստանի զինեալ ուժերու զինուորական Գերասիմ Աւետիքի Առաքելեանը՝ Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութիւնը շեշտած է, որ սահմանին վրայ նման սադրանքներ իրականացնելով, ինչպէս նաեւ տարբեր միջազգային դերակատարներու՝ բանակցութիւնները շարունակելու առաջարկները շարունակաբար մերժելով՝ ազրպէյճանական կողմը կը փորձէ ձգձգել խաղաղութեան գործընթացը եւ զայն մտցնել փակուղի:

«Խստօրէն կը դատապարտենք ազրպէյճանական կողմի՝ նոր լարուածութիւն հրահրելու, խաղաղութեան գործընթացը ձգձգելու եւ զայն փակուղի մտցընելու նպատակ ունեցող այս գործողութիւնները», կը նշուի Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան յայտարարութեան մէջ:

## ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆԻ ՊՆԴՄԱՄԲ, ՀԱՅԱՍՏԱՆ ՊԷՏՔ Է ՓՈԽՀԱՏՈՒՑԷ ԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՍՑՈՒՑԱԾ ՎՆԱՍՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ



Հայաստան պէտք է Ազրպէյճանին փոխհատուցում վճարէ: «Ազատութիւն» կը հաղորդէ, որ այս մասին ըսած է Ազըրպէյճանի մարդու իրաւունքներու յանձնակատար Սապինա Ալիեւան:

Ան խօսք արտասանած է «Ազրպէյճանի մէջ հաշմանդամութիւն ունեցող անձերու եւ ականներէն վնասուածներու պաշտպանութիւնը» թեմայով խորհրդաժողովի ընթացքին եւ

Շար.ը՝ էջ 6

## ԴԵՍՊԱՆ ԱԹԱԲԷԿԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ



Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Վահագն Աթաբէկեան երէկ այցելեց խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի, որուն հետ քննարկեց ներքին լիբանանեան եւ շրջանային հարցերը:

Հանդիպումին ընթացքին անդրադարձ կատարուեցաւ նաեւ Միջին Արեւելքի ու Հարաւային Կովկասի մէջ տիրող իրավիճակին եւ ապահովական մարտահրաւէրներուն:

## ԲԱՆԱԿԻՆ ԵՒ ՀԱՆՐՕԳՈՒՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ



Հանրօգուտ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարարի պաշտօնակատար Ալի Համիէ եւ բանակի հրամանատար զօր. Ժոզեֆ Աուն երէկ Պէյրութի միջազգային օդակայանին մէջ ստորագրեցին գործակցութեան համաձայնագիր մը, որուն հիման վրայ բանակը քաղաքացիական օդանաւորդութեան համար պիտի տրամադրէ արհեստավարժ սպաներ, որոնք պիտի աշխատին օդանաւորդութեան մարզին մէջ՝ այդ մարզին շահերը երաշխաւորելու նպատակով:

Համիէ շնորհակալութիւն յայտնեց լիբանանեան բանակի հրամանատարութեան՝ հանրօգուտ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարարութեան նկատմամբ անոր ցուցաբերած մնայուն գործակցութեան, ինչպէս նաեւ նախարարութեան տրամադրած անոր մարդուժին եւ փորձառութեան համար:

Համիէ բարձր գնահատեց լիբանանեան բանակի զինուորներուն արհեստավարժութիւնը:

## «ԱԶԴԱԿ»-Ի ՖՈՆՏԻՆ

**●«Ազդակ»-ի «Սարգիս Զէյթլեան խմբագրասենեակ»-ի անուանակոչումին եւ Սարգիս Զէյթլեանի կիսանդրիի տեղադրման առիթով՝**

- **Տէր եւ տիկին Նազար Չաթալեան (Քանատա) 2.000 քանատական տոլար**
- **Տէր եւ տիկին Յակոբ Ճանպազեան (Քանատա) 1.000 քանատական տոլար**
- **Տէր եւ տիկին Վահէ Յակոբեան (Քանատա) 1.000 ամերիկեան տոլար**
- **Միացեալ Նահանգներէն «Ազդակ»-ի ընթերցողներ 1.315 ամերիկեան տոլար**
- **Տէր եւ տիկին Տիրան Վահրատեան (Աւստրալիա) 1.000 ամերիկեան տոլար**
- **Տէր եւ տիկին Կայծակ Զէյթլեան (Միացեալ Նահանգներ) 1.000 ամերիկեան տոլար**
- **«Ազդակ»-ի Իրաքի ընթերցողներ 1.000 ամերիկեան տոլար**
- **Տէր եւ տիկին Վահէ Անտոնեան (Քանատա) 400 ամերիկեան տոլար**
- **Տէր եւ տիկին Կարպիս Մխճեան 200 ամերիկեան տոլար**
- **«Ազդակ»-ի Շուէտի ընթերցողներ 300 ամերիկեան տոլար**
- **Տէր եւ տիկին Յակոբ Մէլիքսէթեան (Քուէյթ) 300 ամերիկեան տոլար**
- **Տէր եւ տիկին Ստեփան Չիլոյեան (Միացեալ Նահանգներ) 200 ամերիկեան տոլար**
- **«Ազդակ»-ի Նետերլանտներու ընթերցողներ 400 եւրօ**
- **«Ազդակ»-ի Ֆրանսայի ընթերցողներ 500 եւրօ**
- **«Ազդակ»-ի Յունաստանի ընթերցողներ 500 եւրօ**
- **«Ազդակ»-ի Կիպրոսի ընթերցողներ 300 եւրօ**

## ՊՈՒ ՍԱԱՊ ՊՈՄՊԱՐՏԻԵՐԻԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՑ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Խորհրդարանի փոխնախագահ Էլիաս Պու Սաապ երէկ ընդունեց Լիբանանի մէջ Իտալիոյ դեսպան Նիքոլեթթա Պոմպարտիերին, որուն տուաւ հետեւեալ հարցը. «Արդեօք Եւրոպական Միութեան անդամ աշխարհի ղեկավարները տեղեա՞կ են այն ոճիրներուն մասին, որոնք Իսրայէլ կը գործէ Կազայի քաղաքայիններուն դէմ, ինչպէս նաեւ դիտմամբ սպաննած երեխաներուն մասին»:

Պու Սաապ Պոմպարտիերիէն պահանջեց, որ իր այս տեսակէտը Իտալիոյ կառավարութեան ճամբով փոխանցուի Եւրոպական Միութեան, որպէսզի ան շարժի Կազայի դէմ գործուած ոճիրները կասեցնելու ուղղութեամբ:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան նաեւ Լիբանանի նախագահական ընտրութիւններուն եւ լիբանանեան բանակի հրամանատարի նշանակումին վերաբերող հարցեր, ինչպէս նաեւ հարաւային Լիբանանի մէջ եւ սահմանային Կապոյտ գիծին վրայ տիրող կացութեան մանրամասնութիւնները:

Այս շրջագիծին մէջ լուսարձակի տակ առնուեցաւ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի թիւ 1701 բանաձեւը բարեփոխելու հաւանականութիւնը:

Պու Սաապ ընդգծեց հարաւային Լիբանանի մէջ զինադուլ հաստատելու անհրաժեշտութիւնը, որպէսզի կարելի ըլլայ հարաւային Լիբանանի մէջ յաւելեալ կայունութեան մասին խօսիլ:

«Այդ պարագային միայն կարելի է լիբանանցիներուն՝ ընդհանրապէս ու հարաւի բնակչութեան՝ յատկապէս, յոյս ներշնչել՝ ամերիկեան վարչակազմին հետ բարգաւաճման եւ վերակառուցման ծրագիրները քննարկելու, այն պահուն, երբ քաղաքական բանակցութիւնները կը սկսին», շեշտեց Պու Սաապ:

## ՍԱԼԱՄ ՊՈՒԽԱՐԻԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՑ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Նախկին վարչապետ Թամմամ Սալամ երէկ իր գրասենեակին մէջ ընդունեց Լիբանանի մէջ Սէուտական Արաբիոյ դեսպան Ուալիտ Պուխարին, որուն հետ քննարկեց լիբանանեան զարգացումները, յատկապէս քաղաքական եւ տնտեսական իրադարձութիւնները, ինչպէս նաեւ լիբանանեան-սէուտական երկկողմանի յարաբերութիւնները:

Քննարկուեցան նաեւ նախագահական ընտրութեան թղթածրարը, Կազայի դէմ իսրայէլեան բռնարարքներն ու գործած սպանդները, ինչպէս նաեւ շարք մը միացեալ հարցեր:

## ՊԱՅՍԱՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ ԵԳԻՊՏՈՍԻ ԴԵՍՊԱՆԸ



Ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէնի գործակատար հազարապետ-զօրավար Էլիաս Պայսարի երէկ ընդունեց Լիբանանի մէջ Եգիպտոսի դեսպան Ալաէտտին Ապտէլ Մենեմ Մոհամետ Մուսան, որուն հետ քննարկեց լիբանանեան իրադարձութիւնները, ինչպէս նաեւ շրջանային զարգացումները:

Հանդիպումը ունէր ծանօթացման արարողակարգային բնոյթ:

Պայսարիի այցելեց նաեւ Աշխատաւորական ընդհանուր համադաշնակցութեան նախագահ Պշարա Ասմար՝ գլխաւորելով Պէյրութի եւ Թրիփոլիի նաւահանգիստներու սենտիքաներուն նախագահները ներկայացնող պատուիրակութիւն մը:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան Ընդհանուր ապահովութեան շրջագիծին մէջ սենտիքաներուն ունեցած աշխատանքները դիւրացնելու միջոցները:

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



ՀՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային ներկայացուցչական 51-րդ ժողովը գումարուեցաւ 1-3 դեկտեմբեր 2023-ին, «Աղբալեան- ՀՄԸՄ» մարզամշակութային կեդրոնին մէջ: Ժողովին ներկայ գտնուեցան ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչներ, ընթացաւարտ Շրջանային վարչութեան անդամներ, ՀՄԸՄ-ի Լիբանանի մասնաճիւղերու 54 լիազօր քոյր-եղբայրներ, 25 հրաւիրեալներ եւ ի պաշտօնէ մասնակիցներ:

Շրջանային ներկայացուցչական ժողովը հանգամանօրէն քննեց ՀՄԸՄ-ի Լիբանանի շրջանի անցնող երկու տարուան գործունէութիւնը եւ կատարեց համապատասխան գնահատական:

Ժողովին ընթացքին, ՀՄԸՄ-ի Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր ժողովի մասնակիցներուն կողմէ զեկուցում մը տրուեցաւ ժողովին աշխատանքներուն եւ ՀՄԸՄ-ի համահայկական ընտանիքին դիմագրաւած գլխաւոր մարտահրաւէրներուն մասին:

Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր ժողովի որոշումներու լոյսին տակ, Ներկայացուցչական ժողովը հաստատեց ՀՄԸՄ-ի Լիբանանի ընտանիքին ամբողջական զօրակցութիւնը Արցախին եւ իր աշխատանքները Հայաստանի մէջ շարունակող ՀՄԸՄ-ի Արցախի մասնաճիւղին: Ժողովը նաեւ ընդգծեց, որ իբրեւ ազգային արժէքներու պահապան միութիւն, ՀՄԸՄ այսուհետեւ յանձնառու կ՚ըլլայ իր բոլոր ակումբներուն մէջ եւ միութենական բոլոր ձեռնարկներուն ընթացքին ծածանել Արցախի դրօշը: ՀՄԸՄ-ի մարզիկները եւ սկաուտները իրենց տարազներուն վրայ պիտի կրեն Արցախի յատուկ պէճեր, եւ Արցախի քայլերգը պիտի հնչէ բոլոր հանդիսութիւններուն ընթացքին: Շրջանը նաեւ իր մասնակցութիւնը պիտի բերէ «ՀՄԸՄ-ի Արցախ հիմնադրամ»-ի նուիրահաւաքի աշխատանքին:

Շրջանային ներկայացուցչական 51-րդ ժողովը իր առաջարկները եւ պատկերացումները ներկայացուց ՀՄԸՄ-ի Լիբանանի յառաջիկայ երկու տարուան գործունէութեան համար, յատկապէս շեշտելով երիտասարդութեան համախմբման եւ աշակերտական մարզախաղերուն (ԼԵՎԱՄ-ի) թափ տալու անհրաժեշտութիւնը:

Աւարտին, Շրջանային ներկայացուցչական ժողովը 2023-2025 երկամեակին համար ընտրեց ՀՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային վարչութեան իննանդամ նոր կազմ՝ բաղկացած հետեւեալներէն.

Եղբ. Վահան Համամճեան
Եղբ. Րաֆֆի Խիւտավերտեան
Եղբ. Միեր Քէնտիրճեան
Քոյր Լարա Քէչէպաշեան
Քոյր Մարիա Գէորգեան
Եղբ. Վիգէն Մահտեսեան
Եղբ. Հրայր Մարգարեան
Քոյր Դալար Պէպէճեան
Քոյր Թամար Քէշիշեան

**ԴԻՒԱՆ ՀՄԸՄ-Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ 51-ՐԴ ԺՈՂՈՎԻ**

## ԱՐՑԱԽԵԱՆ ԴԱՏԸ ՉԷ ՓԱԿՈՒԱԾ

Ճեպազրոյցի մը ընթացքին, պատասխանելով լրագրողի մը հարցումին, Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնեան վրդոված պատասխանած է, որ արդէն ութ անգամ յայտարարուած է, որ Արցախի հարց գոյութիւն չունի Հայաստանի համար: Հայաստան վերջնականապէս ընդունած է Ազրպէյճանի հողային ամբողջականութիւնը, ներառեալ Լեռնային Ղարաբաղը:

Աւելի առաջ, նոյն Ալեն Սիմոնեանը յայտարարած էր, որ Արցախի իշխանութիւններու գոյութեան շարունակումը Հայաստանի մէջ կը հակասէ Հայաստանի ապահովութեան, վտանգ կը հանդիսանայ Հայաստանի ազգային անվտանգութեան: Ուրիշ խօսքով, եթէ ընդունինք, որ Արցախի իշխանութիւնները շարունակեն գործել, օրինակ ապահովելու համար արցախցիներու վերադարձը որոշ երաշխիքներու առկայութեամբ, Ազրպէյճան կրնայ բարկանալ ու արգելք ըլլալ «խաղաղութեան խաչմերուկի» իրականացման:

Արցախի իշխանութիւնները զգուշ են ու թոյլ չեն տար որեւէ հրապարակային մեկնաբանութիւն Հայաստանի իշխանաւորներու՝ հանրապետութեան նախագահի, վարչապետի եւ խորհրդարանի նախագահի Արցախի գոյութիւնն իսկ ժխտող յայտարարութիւններուն: Եթէ կայ հակասութիւն, ու չի կրնար գոյութիւն չունենալ, պէտք չէ դրսեւորուի, որպէսզի այս կենսական մարզին մէջ հրապարակ չգայ պառակտումի որոմը:

Հայաստանի իշխանութիւնները Արցախը Ազրպէյճանի անբաժան մաս յայտարարելէն ետք, հիմա կ՚ըսեն, որ արցախցիներուն կը մնայ իրենց գլխուն ճարը տեսնել: Հայաստանէն որեւէ տեսակի օժանդակութիւն չակնկալեն: Հարցը փակուած է. վե՛րջ:

Երկու ամիսէ ի վեր կը սպասենք գիտնալու համար, որ ի՞նչ կը մտածեն արցախցիները իրենց ապագային մասին: Ի՞նչ պիտի ընեն: Իսկ մենք ինչո՞վ կրնանք օգտակար դառնալ իրենց: Մենք, այսինքն՝ հայութիւնը Հայաստանի ու սփիւռքի մէջ: Որոշումը իրենց կը պատկանի. մենք կրնանք միայն խորհուրդ տալ ու օժանդակելու մեր պատրաստակամութիւնը յայտնել:

Ահաւասիկ լաւ լուր մը: Կիրակի, 3 դեկտեմբերին Երեւանի մէջ տեղի ունեցեր է Արցախի խորհրդարանի նիստը: Ժողովը գումարուեր է գաղտնի ու առայժմ քննուած հարցերուն ու կայացած որոշումներուն մասին պաշտօնական հաղորդագրութիւն չկայ: Կ՚ըսուի միայն, որ ստեղծուեր է աշխատանքային խումբ, որ միջազգային հարթակներու վրայ աշխատանք տանի ապահովելու համար արցախցիներու վերադարձը իրենց բնակավայրերը:

Վերջապէս, Արցախի Հանրապետութեան իշխանութիւնները իրազեկեցին իրենց գործունէութեան շարունակման մասին: Արցախի հարցը չէ փակուած. պարտութենէն եւ աքսորէն ետք, գաղթական դարձած իշխանութիւնը պատասխանատուութիւն կը վերցնէ գործելու ի խնդիր միջանկեալ լուծումի մը, որ գէթ կ՚ապահովէ արցախցիներու բնակեցումը իրենց հողին վրայ, ինչպէս եղած էր խորհրդային շրջանի տարիներուն:

Ի՞նչ պիտի ըլլայ, ժխտողական յայտարարութիւններէ ետք, Հայաստանի իշխանութիւններու դիրքորոշումը: Պիտի փորձէ՞ն արգիլել սկսող գործընթացը, թէ՞ պիտի հանդուրժեն, որ արցախցիները Հայաստանը իբրեւ խարիսխ օգտագործելով հետապնդեն իրականացումը իրենց կենսական շահերուն: Առայժմ, արձագանգ չկայ: Մաղթենք, որ Հայաստանի ու Արցախի իշխանութիւններուն միջեւ հակասութիւններ չյայտնուին, եւ թոյլ տրուի արցախցիներուն ազատօրէն աշխատիլ ի նպաստ արցախեան դատին, որ մէկ մասն է Հայ դատին:

Արցախի Հանրապետութեան իշխանութիւնները կ՚ուզեն աշխատանք տանիլ միջազգային հարթակներուն վրայ: Այդ հարթակները, աւա՜ղ, զբաղուած են Իսրայէլ - Համաս ու Ռուսիա - Ուքրանիա պատերազմներով: Վերջինը կարծես խրուած է դիրքային պատերազմի անվերջանալի ճահիճին մէջ: Իսրայէլ - Համաս հակամարտութիւնը տասնեակ հազարաւոր պաղեստինցիներու մահուան պատճառ կը դառնայ ու հանգուցալուծման յոյսեր չի ներշնչեր: Երկուքին ալ պարագային, Միացեալ Նահանգները դաշնակից են կողմերէն մէկուն՝ Իսրայէլին ու Ուքրանիոյ, եւ կը յայտարարեն, որ պիտի չհանդուրժեն իրենց դաշնակիցին պարտութիւնը: Արդարութեան ու իրաւունքին մասին չէ խօսքը, այլ դաշնակիցը նպաստաւորելու մասին:

Միացեալ Նահանգները կը հանդիսանան միջազգային հարթակներէն մէկը, կարեւորագոյնը հաւանաբար: Այս հարթակները, որոնք կ՚առաջնորդուին իրենց սեփական շահերով, պիտի լսե՞ն Արցախի հայութեան ճիչը: Արդարութեան կողմնակից պիտի ըլլա՞ն:

Համայն հայութեան պարտականութիւնն է, իրենց բնակած երկիրներուն մէջ, մղելու համաշխարհային հարթակին մասնակից երկիրներուն իշխանութիւնները, դիրքորոշուելու ի նպաստ արցախեան դատին:

**ՏԻԳՐԱՆ ՃԻՆՊԱՇԵԱՆ**

ՏԵՍԱԿԷՏ

# Ո՞ՒՐ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՏԵՂԸ ԱՅԺՄՈՒ ԵՒ ԳԱԼԻՔ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ - Դ.

Եզրակացութիւն. խորագիրին առաջին մասին պատասխանն է այն, որ այժմ քաոսային եւ անձնասպանական գահավէժ ընթացքի մը մէջ կը գտնուինք: Աշխարհաքաղաքական ուղիներու խաղաքարտը պէտք չէ վատնենք, փճացնենք: Հայաստանի այժմու հակահայ, անխոհեմ վարչախումբը գրեթէ փճացուց նաեւ այս՝ հաւանաբար վերջին փրկարար լծակն ալ:

1.- Հայաստանի եւ Արցախի քաղաքական արժէքը, Աֆղանիստանի նման, խոչընդոտ ըլլալն է(էր) դէպի ռուսական ներքնագաւառը՝ hinterland թափանցումին եւ Իրանը հիւսիսէն խզելու արեւմտեան ճիգին, նաեւ՝ փանթուրանական ծրագիրին: Այս դերակատարութեան խելամիտ օգտագործումին մէջն է ցարդ Հայաստանի քաղաքական արժէքն ու տեղը, որ պէտք է պահպանուի:




*Աշխարհաքաղաքական երկու ուղիներ, հիւսիս-հարաւ, գծիկով նետը, որ Աֆղանիստանի միջոցով թէ՛ կը մտնէր Ռուսիոյ ներքնագաւառը եւ թէ՛ ալ կը խզէր Չինաստանի ցամաքային ուղին արեւմուտքէն: Երկրորդը՝ Ամերիկայի համար թերեւս աւելի նպաստաւոր, Հայաստանն ու Արցախը փճացնելով՝ թէ՛ Ռուսիան կը վտարէն Հարաւային Կովկասէն, թէ՛ Իրանը կը խզեն Ռուսիայէն եւ հիւսիսէն ու վերջապէս, հոգ չէ թէ՝ փանթուրանական միջոցով, կը մտնեն քարիւղով եւ կազով հարուստ Ռուսիոյ դրացի ներքնագաւառը, ապա՝ Ռուսիա:*

Խորհրդային Միութեան կողմէ իրեն դրացի Աֆղանիստանի համայնավար վարչակարգը պաշտպանելու պատերազմը տեւեց շուրջ 9 տարի՝ 24 դեկտեմբեր 1979-էն 15 փետրուար 1989 (1): Ի՞նչ էր պատերազմին պատճառը. արեւմտեան նեցուկով, հակահամայնավար իսլամ հրոսակներուն՝ զինեալներուն, չարտօնել տապալել բարեկամ իշխանութիւնը, որպէսզի Կեդրոնական Ասիոյ իրենց հարաւի սահմաններէն մէկը ապահով պատնէշ մնար արեւմտեան թափանցումին:

Միացեալ Նահանգներուն պատերազմը, իրենց իսկ զինած թալեպանական Աֆղանիստանի դէմ, տեւեց 20 տարի՝ 7 հոկտեմբեր 2001-էն 30 օգոստոս 2021 (2): Ի՞նչ էր պատրուակը, պատրուակ՝ քանի որ Աֆղանիստանը Ամերիկայի դրացին չէ, իրմէ 12 հազար քմ հեռու, եւ անոր ոչ մէկ սադրանք կատարած էր: Յայտարարուած պատրուակը այն էր, որ 11 սեպտեմբեր 2001-ին Նիւ Եորքի զոյգ աշտարակ շէնքերը, Փենթակոնը եւ այլ թիրախներ ճամբորդատար օդանաւերով քանդող ահաբեկիչներուն ղեկավարը, որուն իրենք մարզած ու զինած էին՝ Ուսամա պըն Լատեն, Աֆղանիստան կը գտնուէր… Սակայն պըն լատենը եւ 19 օդահէններուն 15-ը սէուտցի էին, ոչ մէկ աֆղան, ո՛չ ալ իրաքցի կար մէջերնին… Սակայն Ամերիկան իր «դաշնակիցներով» ապօրինի կերպով յարձակեցաւ Իրաքի եւ Աֆղանիստանի վրայ եւ ո՛չ թէ Սէուտական Արաբիոյ վրայ… Ցաւալիօրէն հեգնական է, չէ՞:

Ամերիկայի իսկական նպատակը՝ իր հին ու մնայուն օրակարգով, Աֆղանիստանի վրայով Ռուսիոյ հարաւը եւ կեդրոնը ներթափանցել էր, որ ձախողեցաւ, եւ երկիրը 20 տարի քարուքանդ ընելէ ետք, հապճեպով հեռացաւ անկէ: Ահագին ռազմամթերք լքեց՝ «նուիրեց», ծայրայեղ իսլամ թալեպաններուն, լքեց նաեւ իրեն հետ գործակցող աֆղան բնակիչները, որոնք ի զուր, խուճապահար Քապուլի օդակայան խուժեցին երկրէն փախչելու համար, նոյնիսկ՝ վերջին ամերիկեան օդանաւին մարմնին վրայ մագլցելով, ապա հարիւրաւոր մեթր բարձրացած օդանաւէն վար իյնալով (3) …



*Ամերիկեան վերջին ռազմական օդանաւը, որ լքեց Քապուլի օդակայանը, 30 օգոստոս 2021-ին: Ամերիկայի հետ գործակցող այժմ լքուած աֆղան քաղաքացիներ փախչելու համար օդանաւին վրայ կը մագլցին, որոնցմէ երկուքը քիչ ետք հարիւրաւոր մեթր բարձրութենէն վար ինկան:*




*Ռուսական կազին Ուքրանիոյ վրայով դէպի Եւրոպա հոսքին բազմաթիւ ուղիները, որ Ուքրանիոյ պատերազմին պատճառներէն մէկն է, ի վնաս Եւրոպայի եւ Ռուսիոյ՝ խզել ռուսական կազը եւ անոր տնտեսական շահը:*

Ցաւալի, սակայն այս է Ամերիկայի խայտառակ վարքագիծը: Պատերազմ մը կը սկսին, սակայն չեն գիտեր պատուաւոր աւարտին հասցնել զայն, մինչ իրենց հետ գործակցողները որեւէ արժէք չունին, Սահակաշվիլիի նման, որ այժմ վրացական բանտին մէջ կը հիւծի: Սակայն Ռուսիոյ դէմ ծրագիրը մի՛շտ անփոփոխ նպատակ կը մնայ: Իրօք, 2-11 յունուար 2022-ին Ամերիկա-Անգլիա-Սորոս եռեակը «գունաւոր յեղափոխութեան» փորձ մը եւս կատարեց Ղազախստանի մէջ, զոր Ռուսիան՝ ՀԱՊԿ-ի ուժերով, ներառեալ՝ հայկական բանակին մասնակցութեամբ, ձախողութեան մատնեց:

Աֆղանիստանի վրայով ռուսական ներքնագաւառ ներթափանցելու Արեւմուտքին փորձը ձախողեցաւ: Սակայն միշտ պիտի փորձեն «գունաւոր յեղափոխութիւններ» սարքել ԱՊՀ-ի եւ Ռուսիոյ դրացի երկիրներուն մէջ, մինչեւ որ իրենց հլու հնազանդ բռնապետներ հաստատեն եւ, Ուքրանիոյ նման, զանոնք մղեն Ռուսիոյ դէմ պատերազմելու: Ճորճ Սորոսը 1990-ական տարիներէն արդէն խոստացած էր պարտութեան մատնել Ռուսիան՝ միւս սլաւոնական երկիրներուն միջոցով:

2.- Հայաստանը իր վրայով եւ շուրջը, ցամաքային ռազմավարական ուղիներու մրցում-պատերազմին մէջ, կամաւոր կերպով, խայտառակօրէն թշնամիներուն փափաքը կը կատարէ եւ անոնց կ'ենթարկուի: Ո՛ւր մնաց դարերէ ի վեր Հայաստանի ռազմավարական կարեւոր դիրքին գիտակցութիւնը եւ շահաւէտ օգտագործումը:

Նուազագոյն իմաստութիւնը կը պահանջէ(ր) դասեր քաղել՝ Հայաստանէն 15 տարի առաջ՝ 2003-ին, «գունաւոր յեղափոխութեան» զոհ դարձած հիւսիսի դրացի Վրաստանէն, որպէսզի «նոյն փոսին մէջ չիյնայինք», սակայն «իշու իմաստութիւնն» անգամ չունենալով՝ Փաշինեանի խմբակը փոսը ինկաւ եւ 2018-էն ի վեր մի՛այն անոր վնասները կը կրենք: Ահաւասիկ՝ կարգ մը տուեալներ.

1.- Վրաստանը կորսնցուց Աբխազիան եւ Հարաւային Օսեթիան: (Հայաստանը՝ Արցախը եւ հարիւրաւոր հեկտար հողեր):

2.- 2010-2020 861 հազար դժգոհ վրացիներ արտագաղթեցին, բնակչութեան 23% տոկոսը վերջնականապէս լքեց իր հայրենիքը (4):

3.- Թուրքիան եղաւ շահաւորը, որ դէպի Վրաստան մեծագոյն արտածողն է՝ 2,4 միլիառ տոլար, մինչ Վրաստան դէպի Թուրքիա շուրջ վեց անգամ նուազ՝ 435,5 միլիոն տոլար արտածած է 2022-ին (5):

4.- 700-է աւելի ազրպէյճանական ընկերութիւններ կը գործեն Վրաստանի մէջ (6):

5.- Վրաստանի մեծագոյն ընկերութիւնը ազրպէյճանական Սոքարն է (7):

Այս տուեալները ցոյց կու տան, որ «արեւմտեան» դառնալով՝ վրացիներուն կեանքի մակարդակը չբարելաւուեցաւ, եւ հակառակ ծովային բաց սահման ունենալուն ու աշխարհի հետ ազատ կապ՝ Թուրքիան եւ Ազրպէյճանը կը տիրապետեն Վրաստանի տնտեսութեան: Ո՛չ ՕԹԱՆ-ի անդամ դարձաւ, ո՛չ ալ՝ Եւրոպական միութեան: Ընդհակառակը, վերջերս ՍԿՍԱԾ Է ՎԵՐԱԴԱՐՁ ԴԷՊԻ ՌՈՒՍԻԱ, կը գրէ ամերիկեան ռազմավարական հիմնադրամ Քարնիկի Էնտաումընդի 21 յուլիս 2023-ի յօդուածը (8): Սակայն՝ Հայաստանը յիմարօրէն կը հեռանայ իր տնտեսական եւ ապահովական մեծագոյն աղբիւրէն՝ Ռուսիայէն…

Ահաւասիկ մեր անմիջական դրացի Վրաստանին վերջին 20 տարիներու թարմ պատմութենէն ոչ ի՛նչ սորված է Հայաստանի այս բթամիտ, ու անարժան ու դաւաճան իշխանութիւնը, որ շատ աւելի մեծ կորուստներով, եւ մի՛այն Արեւմուտքին դատարկ խոստումներուն հաւատալով, առանց որեւէ նոր դաշնակիցի, կը սլանայ դէպի հակառուս անձնասպանական գործողութիւն՝ ցարդ անպաշտօն կերպով հեռանալով ԱՊՀ-էն եւ ՀԱՊԿ-էն՝ մտնելու համար Թուրքիոյ եաթաղանին տակ: Այս վարչախումբը բացայայտ կերպով դաւաճանեց իր օրինաւոր դաշնակից Ռուսիոյ՝ բոլորովին անտեղեակ իր եւ շրջանային քարտէսէն: Ռուսիան՝ 17 միլիոն 98 հազար 250 քառ. քմ, աշխարհի ամենամեծ երկիրն է, իսկ առանց ծովի, կղզիացած Հայաստանը՝ 575 անգամ փոքր, առայժմ 29 հազար 743 քառ. քմ է՞…

«Եւրոպական միութիւնը չի թաքցներ մեզ ամէն ձեւով զըսպելու, Կեդրոնական Ասիայէն եւ Անդրկովկասէն դուրս մղելու իր մտադրութիւնները: Անոնք պիտի չյաջողին: Մենք այստեղ ենք պատմականօրէն եւ ոչ մէկ տեղէ պիտի անհետանանք: Եւ մեր գործընկերները, մեր դաշնակիցները ասիկա շատ լաւ գիտեն», ըսաւ ռուսական դիւանագիտութեան պետը՝ Սերկէյ Լաւրով, 12 նոյեմբեր 2023-ին (9):

Սուտ խոստումներով նշանաւոր այս փաշինեանական վարչախումբը, թշնամիին զիջած իր բոլոր ազգակործան արարքներուն դիմաց, իր վարքագիծին վայել, նաեւ՝ ցարդ մի՛այն սպառնախառն դատարկ ու սուտ խոստումներ ստացաւ թէ՛ թշնամիներէն եւ թէ՛ ալ նոյնքան թշնամի Արեւմուտքէն՝ ոչնչութեան վերածելով Հայաստանի ու հայութեան աշխարհաքաղաքական դիրքը եւ որեւէ օգտագործելի լծակները…



*Չինական երկաթուղիի հրաշքի համազօր՝ ամպերու մէջէն կամուրջներէն (11):*

Արդի երկաթուղիներու ճարտարարուեստը, որուն կը տիրապետէ Չինաստանը, ունի աշխարհի ամէնէն արագ բեռնափոխադրութեան գնացքը՝ CRC CR400AF-A, որուն արագութիւնը կը հասնի ժամական 350 քմ-ի (10): Այլ խօսքով, իտէալական պարագային, Փեքինէն առաքուած բեռը շուրջ 20 ժամէն 6970 քմ հեռու Պէյրութ կը հասնի: Թող ըլլայ 48 ժամ՝ երկու




*Հնդկաստանի մէջ, 9 սեպտեմբեր 2023-ի «Քսաններու խմբակ»-ի ժողովին առընթեր, նախնական համաձայնութիւն գոյացած է Հնդկաստանէն Եւրոպա ուղիի մը, որ կ'անցնի ԱՄԷ-էն, Սէուտական Արաբիայէն, Յորդանանէն եւ Իսրայէլէն:*

օր, եթէ երկաթուղիի կապ գոյութիւն ունենար, որուն շինարարութեան ալ տիրապետած է Չինաստանը (11): Մինչ նաւով՝ 30-35 օր: Ահաւասիկ՝ չինական նոր «Մետաքսի ճամբայ»-ներէն մէկը, որուն մրցակից, կամ խափանող այլեւայլ ուղիներ կը պատրաստուին:

Այնպէս կը թուի, թէ այժմ Եգիպտոսին տարեկան 8 միլիառ տոլար շահ ապահովող Սուէզի ջրանցքին գլխուն փորձանք մը ծրագրուած է, քանի որ Չինաստան, Հնդկաստան եւ Իրան այլընտրանքային ցամաքային ուղիներ կը ծրագրեն, որոնցմէ է Հայաստանը: Իսրայէլի հին՝ 1960-ականներու ծրագիրն էր «Պէն Կուրիոն»՝ Սուէզը փոխարինող, շատ աւելի երկար նոր ջրանցք մը, Աքապայի ծոցէն Իսրայէլի եւ Կազայի վրայով դէպի Միջերկրական ծով… Այդ ծրագի՞րը պիտի գործադրեն (12):

**Կազայի պատերազմին բազմակողմանի ենթահողը:**

Իսրայէլի կողմէ «առեւանգուած» Միացեալ Նահանգներուն (13) ճնշումով Ծոցի արաբական երկիրներէն ոմանք, 1948-ին Իսրայէլի ստեղծումէն ի վեր առաջին անգամ ըլլալով, սկսան անոր հետ յարաբերութիւն մշակել: Կարեւորագոյն երկիրը՝ Սէուտական Արաբիան ալ այս ճամբուն մէջ էր, երբ 7 հոկտեմբեր 2023-ին սկսաւ Կազայի դէմ պատերազմը (14), որ խանգարեց, կամ, յուսամ, վերջ դրաւ իր այս ընթացքին:

Ի՞նչ է արաբական երկիրներուն դէմ Ամերիկա-Իսրայէլ յաջող լծակը՝ սպառնալիքը: Պատասխանը շատ պարզ է՝ «գունաւոր յեղափոխութիւն», այսինքն՝ իշխանափոխութիւն եւ ապօրինի պատժամիջոցներ, եթէ չենթարկուին…

Հնդկաստանի մէջ 9 սեպտեմբեր 2023-ի «Քսաններու խմբակ»-ի ժողովին առընթեր, նախնական համաձայնութիւն գոյացաւ Հնդկաստանէն Եւրոպա ուղիի մը՝ India-Middle East-Europe Economic Corridor (IMEC), որ կ'անցնի ԱՄԷ-էն, Սէուտական Արաբիայէն, Յորդանանէն եւ Իսրայէլէն: Շատ իմաստալից են այս լուրը հաղորդող կարգ




*Արեւելեան Միջերկրականի կազով եւ քարիւղով հարուստ ծովը՝ Կազայէն, որ ամենամեծ պահեստը ունի (մեծ եռանկիւնը), մինչեւ Սուրիա: Միացեալ Նահանգներուն անօրէն արգելքին պատճառով ցարդ մի՛այն Իսրայէլին «արտօնուած» է կազի արտահանումը ծովէն:*




*Արեւելեան Միջերկրականի նաւահանգիստները՝ ըստ Իսրայէլի, մի՛այն Հայֆան գործածելի է, քանի որ ինք կը ռմբակոծէ կամ՝ ռմբակոծած է մնացեալը:*




*Դէպի Եւրոպա՝ Իսրայէլ, Կիպրոս, Յունաստան եւ Իտալիա իսրայէլեան եւ կիպրական կազի համաձայնութիւն՝ Թել Աւիւի մէջ, 3 ապրիլ 2017-ին:*

**ՅԱՐՈՒԹ ՉԷՔԻՃԵԱՆ**

**Շար.ը՝ էջ 6**

# ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ, ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԾԱԾԿԱՆՈՒՆՆԵՐՈՒ ԲԱՌԱՐԱՆ (ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ, ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ, ԹՈՒԱՆՇԱՆԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐ), «ՎԷՄ» ՄԱՏԵՆԱՇԱՐ, ԹԻՒ 5, ԵՐ. «ԼՈՒՍԱԿՆ», 2023, 253 ԷՋ

**Բանալի բառեր - ՀՅ Դաշնակցութիւն, բառարան, ծածկանուն, շիֆր, գաղտնաբառ, անուն, տեղանուն, գործիչ, Ռուսաստան, Թուրքիա, ազատամարտիկ, լուծոյթ:**

**Մուտք**

Վաստակաշատ պատմաբան Երուանդ Փամպուքեանն իր տասնամեակների գիտահետազօտական աշխատանքների ընթացքում տարբեր սկզբնաղբիւրներից՝ արխիւային փաստաթղթերից, նամակագրութիւնից, յուշագրութիւններից, մամուլից, բարեխղճօրէն հաւաքել եւ ընթերցողի դատին է յանձնել ինքնատիպ մի աշխատութիւն, որը ՀՅ Դաշնակցութեան գործիչների, կառոյցների ու նրանց գործունէութեան վայրերի ծածկանունների (pseudonyms) համահաւաք ներկայացման առաջին փորձն է:

Յայտնի է, որ գոյութիւն ունեն բառարանների բազում տեսակներ, բայց դրանցից թերեւս ամենահետաքրքիրն ու խորհրդաւորը կարելի է համարել ծածկանունների բառարանը: Քանզի ծածկանունների գործածութեան հիմքն ու շարժառիթը եղել է որոշակի անձի իսկական անուն-ազգանունը կամ կուսակցական կառոյցի ու նրա գործունէութեան վայրի անւանումը «աչքից» հնարաւորինս հեռու պահելու, հրապարակ չհանելու, չբացայայտելու զուտ գաղտնապահական նպատակը: Հակառակ պարագայում, դրան կը հետեւէին՝ հետապնդումներ, ձերբակալութիւններ, քաղաքական դատավարութիւններ, բանտ, աքսոր եւ այլն:

Ծածկանուան կիրառումը համաշխարհային երեւոյթ է, որի նպատակն է այս կամ այն երկրի քաղաքական գործիչներին ու կառոյցներին, մշակոյթի դէմքերին ներկայացնել տուեալ պետական իշխանութեան տուած ազատութեան սահմաններում: Ծածկանունների գործածութեան սկիզբ են համարում 19-րդ դարի կէսերը, ինչը հաւանաբար կապուած էր եւրոպական յեղափոխութիւնների ու ժողովրդավարական արժեհամակարգի արմատաւորման հետ: Ուստի ծածկանունները սովորաբար աւելի յաճախ գործածուել ու շրջանառուել են այն պետութիւններում, որոնցում ուժեղ են եղել քաղաքական հետապնդումները, հալածանքները եւ այլն: Մեր տարածաշրջանում այդպիսի բռնավարչակարգերից էին օսմանեան Թուրքիան եւ ցարական Ռուսաստանը, մասամբ նաեւ՝ շահական Իրանը, որոնցում էլ տասնամեակներ շարունակ գործել է ՀՅ Դաշնակցութիւնը:

**1.- Բառարանի բնոյթը եւ առանձնայատկութիւնները**

Ընթերցողի դատին յանձնուած ծածկագրերի այս համահաւաք բառարանում առաջին անգամ ամբողջական ձեւով ի մի են բերուած ՀՅ Դաշնակցութեան գործիչների, կուսակցութեան տարածքային կառոյցների եւ նրանց գործունէութեան վայրերի ծածկանունները նրա հիմնադրման պահից մինչեւ սփիւռքեան կեցութեան նախնական շրջանը՝ 1930-ական թուականները: Քանի որ ՀՅ Դաշնակցութիւնը եղել է յեղափոխական կուսակցութիւն եւ պայքարել հայ ժողովրդի ու երկատուած հայրենիքի ազատագրութեան համար, նրա գործիչներն ու կառոյցներն անհրաժեշտաբար դիմել են ընդյատակեայ գործունէութեանը բնորոշ գաղտնագիր (ծածկագիր) կապի ձեւերին ու եղանակներին:

Մէկ աշխատութեան մէջ կուսակցական գործիչների անունների ու տեղանունների եւ տարբեր մարմինների ծածկագրերի ամփոփումը խսկայածաւալ եւ խիստ աշխատատար գործ է: Նման աշխատանք իրականացնելու, անգամ նման թեման բարձրացնելու, համակարգելու եւ հրապարակ բերելու համար սովորաբար պահանջւում է ոչ թէ մէկ անձի, այլ ուսումնասիրողների մի ստուար խմբի տարիների հետեւողական աշխատանք: Ե. Փամպուքեանը դա կատարել է միայնակ, ինչը խիստ գնահատելի է:

Ընթերցողի մօտ կարող է հարց ծագել, թէ ինչո՞ւ էր անհրաժեշտ յատկապէս ՀՅԴ կուսակցութեանը վերաբերող ծածկանունների առանձին բառարան հրապարակել: Դժուար չէ հասկանալ, որ դա պայմանաւորուած է մի քանի հանգամանքներով: Ամէնից առաջ ՀՅԴ-ն 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարասկզբի հայ իրականութեան ամենազանգուածային, տարածականօրէն ամենաընդգրկուն եւ ամենաազդեցիկ կուսակցութիւնն էր: Իսկ որքան խոշոր ու ծաւալուն է տուեալ քաղաքական ուժը, այնքան մեծաթիւ պիտի լինեն նրա գործածած ծածկանունները: ՀՅԴ-ն իր ծածկագրերի թուաքանակով կարող է մրցակցել նոյնիսկ այդ ժամանակի Համառուսաստանեան սոցիալ-դեմոկրատական (պոլշեւիկեան) կուսակցութեան հետ: Բաւական է արձանագրել այն փաստը, որ 1907 թ. օգոստոսին Շթութկարթի համաժողովում ռուսական էսէռների կուսակցութեան երաշխաւորութեամբ Սոցինտերնին անդամագրուած ՀՅ Դաշնակցութիւնն ունեցել է 165 հազար անդամ(1): 1917 թ. Փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ ՀՅ Դաշնակցութեան հակառակորդ «Մշակ» թերթը, արտատպութիւն կատարելով Թիֆլիսի «Կաւկազ» թերթից, խոստովանում էր, որ՝ «Դաշնակցութիւնն, անկասկած, ամենաազդեցիկ հայ կուսակցութիւնն է»(2): Ուստի այսօր էլ ՀՅԴ պատմութեանը քիչ թէ շատ ծանօթ իւրաքանչիւր ոք գիտի բազմաթիւ դաշնակցական գործիչների ու ազատամարտիկների անուններ, որոնք իրականում եղել են նրանց ծածկանունները, սակայն այնքան յաճախակի են գործածուել, որ փաստօրէն ընկալւում են որպէս նրանց իսկական անունը կամ ազգանունը: Օրինակներ, որքան ուզէք՝ Առաջին հանրապետութեան հիմնադիր Արամը (Սարգիս (Սերգէյ) Յովհաննիսեան), ՀՅԴ հիմնադիրներից Ռոստոմը (Ստեփան Զօրեան) եւ այլն:

**2.- Դիտարկումներ բառարանի կառուցուածքի վերաբերեալ**

Կառուցուածքային առումով բառարանը կազմուած է երեք բաժնից՝ ա) Անձնանուն-ծածկանուններ, բ) Տեղանուն-ծածկանուններ եւ գ) Թուանշանային ծածկագրեր(3): Ընդ որում, կառուցուած է այն սկզբունքով, որ տուեալ բաժնի մի մասում տըրւում է տուեալ անձի իսկական ազգանուն-անունը՝ իր ծածկագրուած տարբերակով կամ աւելի յաճախ՝ տարբերակներով (էջ 12-61), իսկ միւս մասում հակառակ յաջորդականութեամբ տրւում է նրա առաւել տիպական ու գործածական ծածկանունը(4), իսկ դրա դիմաց՝ ազգանուն-անունը (էջ 62-127):

Այդ նոյն սկզբունքով են կառուցւած տեղանուն-ծածկանունները. առաջին մասում նախ՝ իսկական տեղանունները, ապա՝ դրանց ծածկանունները (էջ 128-156), երկրորդ հատւածում դարձեալ հակառակ յաջորդականութեամբ նախ տրւում է տուեալ վայրի ծածկանունը, ապա՝ իսկական անուանումը (էջ 158-217) եւ այդպէս շարունակ:




Ակներեւ է, որ նման սկզբունքով բառարանի ձեւաւորումը կազմողից ահռելի աշխատանք է պահանջել, սակայն դրա շնորհիւ էապէս հեշտացել է տուեալ հիմնահարցերով զբաղւող անձանց գործը: Առանձնապէս կ'ուզենայինք ընդգծել բառարանի՝ ծածկանուններով սկսուող հատւածները, քանզի յայտնի է, որ յատկապէս գաղտնի փաստավաւերագիր նիւթերում սովորաբար նշուած են լինում գործիչների ծածկագիր անուն-ազգանունները: Ուստի այս բառարանը հնարաւորութիւն է տալիս առանց մեծ ջանքերի պարզելու եւ բացայայտելու, թէ ո՛ւմ մասին է խօսքը: Նոյն սկզբունքով ծածկագրուել են նաեւ կուսակցական մարմինների եւ նրանց գործունէութեան վայրերի անուանումները:

Եւ վերջապէս, բառարանի վերջին բաժինը նուիրուած է թուանշանային ծածկագրերին, որոնք անհամեմատ աւելի բարդ՝ թուայնացուած կառուցուածք ունեն: Նման պարագայում ծածկագիր բնագիրն է թուանշաններով կազմուած, եւ դրա ընթերցման, վերծանման ու բովանդակութեան ընկալման համար անհրաժեշտ էր, որ նամակը, գրութիւնը կամ հաղորդումը ստացողն իր ձեռքի տակ ունենար նաեւ այդ թուանշաններն ապաքոտաւորող, այսպէս կոչուած, «բանալի» ծածկագրերը:

**3. Ծածկագրուած անձնանունների եւ տեղանունների բովանդակային ընդգրկումը**

Ինչպէս արդէն ասուեց, ծածկանունների ներկայ բառարանում ընդգրկուած անձանց եւ կառոյցների գործունէութեան հիմնական դաշտերն են եղել օսմանեան Թուրքիան եւ ցարական Ռուսաստանը: Երկու կայսրութիւններում էլ ՀՅ Դաշնակցութեան յայտնի գործիչներն ու կառոյցները գործել են խիստ վերահսկողութեան եւ հետապնդումների պայմաններում: Ծածկագրերի բառարանն ընթերցողին հնարաւորութիւն է տալիս գաղափար կազմելու ՀՅԴ այս կամ այն գործչի, ազատամարտիկի կամ կուսակցական կառոյցի գործունէութեան վայրի մասին: Բնական է, որ որքան աւելի լայն ու բազմաբնոյթ էր տուեալ անձի գործունէութիւնը, այնքան աւելի շատ էին նրա կեղծանունները: Քանզի մէկ-երկու անգամ իր ինքնութեան բացայայտումից յետոյ նա հարկադրուած էր մտածել ծածկանունը փոխելու մասին:

Փորձենք ներկայացնել ՀՅԴ գործիչներից առաւել շատ ծածկանուն ունեցողներին:

Կուսակցութեան առաւել ազդեցիկ դէմքերի մինչ օրս յայտնի ծածկանունների մօտաւոր թուային պատկերը հետեւեալն է. ՀՅԴ հիմնադիր երրորդութիւնից Ս. Զաւարեանն օգտագործել է 5 ծածկանուն (էջ 23), Քր. Միքայէլեանը՝ 7 (էջ 39), իսկ «գործի մարդ» Ստ. Զօրեանը՝ 8 (էջ 49): Մեծ թուով ծածկանուններ են ունեցել գրող եւ պետական գործիչ Աւետիս Ահարոնեանը՝ 6 ծածկանուն (էջ 20), իր բազմաբեղուն գործունէութեամբ յայտնի Աբրահամ Գիւլխանդանեանը՝ 7 (էջ 20), ՀՅԴ հիմնադիր սերնդի ներկայացուցիչ Յովնան (Յոնան) Դաւթեանը՝ 8 (էջ 21), օսմանեան մեճլիսի պատգամաւորներ Արշակ Վռամեանը (էջ 53) եւ մշեցի Գեղամ Կարապետեանը եւ ս՝ 8-ական (էջ 55), իսկ ՀՀ վերջին վարչապետ Սիմոն Վրացեանը՝ ընդամէնը 6 ծածկանուն (էջ 53): Բայց սա դեռ ամբողջը չէ, այլ՝ միայն այն, ինչը մինչ օրս յաջողուել է բացայայտել, քանզի, մեր կարծիքով, գոնէ Ռոստոմի ծածկանունների թիւն աւելի մեծ է:

Ինչ վերաբերում է հայդուկներին, ապա սովորաբար նրանց համար իբրեւ ծածկանուններ կիրառուել են իրենց ծննդավայր-բնակավայրերի, գիւղերի, լեռների, դաշտերի եւ այլ անուանումներ, օրինակ՝

Սասունցի, Շէնիկցի, Տալվորիկցի, Սպաղանաց, բայց ոչ երբեք՝ աւազանի ու մկրտութեան անունները, քանզի տեղի իշխանութիւնները դրանք կարող էին բացայայտել ծխամատեանների միջոցով: Հայ ազատամարտի ամենավառ ներկայացուցիչներից հայդուկապետ Գէորգ Ադամեան-Ղազարեանը (Չաւուշ) ունեցել է 4 ծածկանուն (էջ 13), Սարգիս Մեհրաբեանը (Խանասորի Վարդան)՝ նոյնպէս 4, Նիկողայոս Տէր Յովհաննիսեանը (Նիկոլ Դուման)՝ 5 (էջ 57), իր հեռատես ու զուսպ մարտավարութեամբ հանրաճանաչ հայդուկապետ Արմէնակ Ղազարեանը (Հրայր Դժոխք) (էջ 34) եւ Սեւ քարեցի Սաքոն՝ 7-ական (էջ 30) եւ այլն:

Բառարանը ցոյց է տալիս, որ ոչ պակաս թուով ծածկանուններ են ունեցել ՀՅԴ կառոյցները, այդ թւում՝ կուսակցութեան բարձրագոյն գործադիր մարմին հանդիսացող բիւրոները: Հարկ է արձանագրել, որ կուսակցութեան Արեւելեան եւ Արեւմտեան բիւրոները հանգամանքների բերումով օգտագործել են 5 տարբեր ծածկանուններ (էջ 33): Կուսակցութեան բարձրագոյն ղեկավար մարմինները, նաեւ կենտրոնական ու տեղական կոմիտէները երբեմն փոխել են իրենց տեղակայման վայրերը: Ուստի հնարաւոր հետապնդումներից ու բացայայտումներից խոյս տալու համար նրանք հարկադրուած են եղել փոփոխել նաեւ իրենց ծածկանունները:

Նոյնը վերաբերում է տեղանունների ծածկագրմանը: Այս առումով, բառարանի հեղինակ Ե. Փամպուքեանի համար աղբիւրագիտական հարուստ հիմք են ծառայել յատկապէս ՀՅ Դաշնակցութեան Կենտրոնական արխիւի նիւթերը: Դրանցից դուրս են բերուած կուսակցութեան ընդհանուր եւ ռայոնական ժողովների, խորհրդաժողովների, հաւաքների, կենտրոնական ու տեղական կոմիտէների, մարտական խմբերի ու նրանց տեղակայման վայրերի (քաղաք, աւան, գիւղ եւ այլն) ծածկանունները: Բառարանի հեղինակին յաջողուել է իր գտած «բանալու» միջոցով պարզել տուեալ բնակավայրի բուն անուանումը: Բառարանում այդ բնակավայրերը նըշ-ւած են թաւատառ, իսկ երբ «բանալին» հնարաւոր չի եղել ճշդել, պարզապէս նշուել է տուեալ նահանգի, գաւառի կամ գաւառակի անուանումը:

Տեղավայրերի ծածկագրուած անուանումներն իմաստային առումով արտացոլում են տուեալ վայրի քաղաքական, պատմաաշխարհագրական, հոգեւոր եւ այլ բնոյթի յատկանիշները: Բերենք օրինակներ.

Թուրքիա-տաճկաստանը ծածկագրուած է Սեւաստան, Ղարաբաղը՝ Ապառաժ, Մշոյ դաշտը՝ Դուրան, Կ. Պոլիսը՝ Վիշապ, Մոսկուան՝ սկըզբում Եկեղեցի, ապա՝ Հրէշ, Զէյթունը՝ պատմական անուանումով՝ Ուլնիա, Իրանի ծովեզրեայ Էնզելի քաղաքը՝ Պորտ-Արտուր, Սոֆիան՝ Վիտոշ եւ այլն (5): Յատկանշական է, որ հայ ժողովրդի ազատագրութեան եւ հայոց պետականութեան վերականգնման ճանապարհին առաւելապէս վտանգ ներկայացնող սուլթանական եւ ցարական կայսրութիւնների մայրաքաղաքները՝ Կ. Պոլիսը եւ Մոսկուան, անուանուել

են համապատասխանաբար Վիշապ եւ Հրէշ, ինչը վկայում է այդ բռնապետութիւններին տրուած համարժէք գնահատականի մասին:

**4.- ՀՅԴ-ի հետ շփման մէջ եղած այլ կուսակցութիւնների եւ անկուսակցականների ծածկանունները**

Թէեւ գրախօսուող բառարանը նուիրուած է զուտ ՀՅ Դաշնակցութեան ծածկանուններին, սակայն հասկանալի է, որ կուսակցութիւնը

չի գործել մեկուսի եւ հանգամանքների բերումով յաճախակի շփման մէջ է եղել այլ քաղաքական ուժերի, նրանց գործիչների ու կառոյցների հետ, որոնք եւս կրել են ծածկանուններ: Ուստի բառարանում կարելի է հանդիպել այլ քաղաքական կուսակցութիւնների (Ս. Դ.

Հնչակեան, Արմէնական, Հայ սահմանադիր ռամկավար, էսէռներ, պոլշեւիկներ եւ այլն) ու նրանց գործիչների բազում ծածկագիր անուններ: Այսպէս, յիշատակելի են արմէնականների գաղափարական հայր Մկրտիչ Փորթուգալեանը՝ Վարպետ, Մկրտիչ Թերլեմեզեանը՝ Աւետիսեան, Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնից Աւետիս եւ Մարօ

Նազարբեկեանները՝ Նազարբէկ, Ռուբէն Խանազատը՝ Նշան Կարապետեան, Արփիար Արփիարեանը՝ Հայկակ, Գէորգ Ղարաջեանը՝

Արկոմեդ, Գաբրիէլ Կաֆեանը՝ Շմաւոն, Գարեգին Կոզիկեանը՝ Եսալեմ, Կարապետ Թուրսարգսեանը՝ Աղասի, Յակոբ Ղազարեանը՝ Լազօ եւ ուրիշներ, էսէռներից Լեւոն Աթաբէկեանը՝ Ռիխարդ, եւ Արշամ Խոնդկարեանը՝ Սեւեան, ՀԺԿ-ից Առաքել Բաբախանեանը՝ Լէօ, անկուսակցական Մաղաքիա արք. Օրմանեանը՝ Բուրդ Մօրուք եւ այլք (6):

Մէկ նկատառում. ցանկալի կը լինէր, որ այլ կուսակցութիւնների գործիչների եւ անկուսակցականների անունների դիմաց՝ փակագծերում, նշուէր, թէ ի՞նչ կուսակցութեան էին նրանք պատկանում, կամ՝ նրանց անկուսակցական լինելու մասին: Դա միաժամանակ ցոյց կը տար, թէ ՀՅԴ-ն ինչ հասարակական-քաղաքական ուժերի ու շրջանակների հետ է աւելի յաճախ հաղորդակցուել:

**5.- Դիտարկումներ՝ թուանշանային (շիֆրերով) ծածկագրերի վերաբերեալ**

Թուանշանային ծածկագրերի վերծանումը համեմատաբար աւելի բարդ է, քանզի թուայնացուած բնագիրը ընթերցելու եւ բովանդակութիւնը հասկանալու համար պահանջւում է եւս մէկ թուային ծածկագիր՝ «բանալի»: Ծածկագրի այս տեսակն ընթերցողին աւելի հասկանալի դարձնելու համար Ե. Փամպուքեանը գրախօսուող գրքում լրացուցիչ պարզաբանումներ է տուել (7): Համեմատութեան կարգով կարելի է ասել, որ թուանշանային ծածկագիրն ինչ-որ չափով յիշեցնում է 19-րդ դարի ամերիկացի գիւտարար Ս. Մորսէի՝ կէտերի ու գծերի նիշային, թուային, տառային քոդաւորման ու փոխանցման համակարգը, սակայն՝ այն տարբերութեամբ, որ Մորսէի նորարարութեան պարագայում գործադրուել է ելեկտրական հեռագրման եղանակը, իսկ մեր գործիչները հասկանալիօրէն կապը պահել են գաղտնի ուղիներով, կապաւորների միջոցով:

Թուանշանային ծածկագրմամբ այս կամ այն բովանդակութեամբ բնագիրը համապատասխան կառոյցին կամ ենթակային ուղարկելու համար օգտագործուել են, օրինակ, հանրածանօթ հայրենասիրական որեւէ երգի կամ բանաստեղծութեան առաջին տողերը կամ ամբողջական քառեակը: Այդ բնագրում գործածուած տառերին հայերէն այբուբենի յաջորդականութեամբ տրուել են թուեր, եւ այդ եղանակով թուագրուել է ամբողջ բնագիրը: Այսինքն թուեր բովանդակող բնագիրն է տարբեր ձեւերով ու միջոցներով ուղարկուել հասցէատիրոջը: Իսկ թուայնացուած բնագիրը բացելու եւ ընթերցելու համար հարկ էր ունենալ դրա ընթերցման, ծածկագրի վերծանման «բանալին»: Ուստի Ե. Փամպուքեանը պարզաբանում է, որ շատ յաճախ թուանշանային ծածկագրի վերջում յիշատակուել է տուեալ հանրայայտ ոտանաւորի վերնագիրը: Այդպիսի հանրաճանաչ ոտանաւորներից յիշատակւում են, օրինակ, Ռ. Պատկանեանի «Արաքսի արտասուքը», Մ. Նալբանդեանի «Ազատութիւնը», Գ. Դոդոխեանի «Ծիծեռնակը», Կոմիտասի «Կռունկը» եւ այլն:

Թուանշանային ծածկագրման համար յաճախ օգտագործուել է քիմիական գաղտնի թանաքի բաղադրութեամբ պատրաստուած մելանագոյն լուծոյթը, որով գրուած բնագիրն ար-

տաքուստ չի նկատուել, սակայն կրակի վրայ պահելով կարելի էր ընթերցել այն, ուստի հրահանգւում էր, որ գրութեան հասցէատէրը բովանդակութեանը ծանօթանալուց յետոյ անմիջապէս ոչնչացնէր այն: Նման արհեստագիտութեան վարպետ է համարուել Քր. Միքայէլեանը: Վերջերս լոյս ընծայուած նրա անտիպ նամակների ժողովածուի՝ մի ծածկագրի վերաբերող գրութիւնում կարդում ենք. «Այս առաջին եւ վերջին անգամ է,- գրում էր Քր. Միքայէլեանը Սղերդ քաղաքի կոմիտէին,- որ մենք գրում ենք ձեզ «բաց թանաքով» եւ պաշտօնական թղթի վրայ: Այսուհետ պէտք է գրենք դեղով (8): Գործի վերաբերեալ կարեւոր նամակները, ապահովութեան համար, պէտք է գրել դեղով: Երկու տեսակի դեղ ունենալու է. մէկը՝ գրելու, միւսը՝ ձեր ստացած նամակները բանալու համար» (9): Բացի այդ՝ Քր. Միքայէլեանը զգուշացնում էր, որ՝ «Նոյնիսկ գաղտնի թանաքով գրուած նամակներում պէտք է յատուկ անունները **շիֆրէ** անէք (ծածկագրով գրէք), այսինքն ոչ թէ տառերով, այլ՝ թուանշաններով: Դրա համար ուղարկում ենք ձեզ հետեւեալ աղիւսակը»: Այնուհետեւ տրուած է թուանշաններով բնագիրը (աղիւսակը) (10): Նոյնը բերուած է գրախօսուող ժողովածուում (11): Վերջում Քրիստափորը պատուիրում էր ընկերներին, որ աղիւսակի «բանալին» օգտագործելուց յետոյ, թուերը պահելով մտքում, իսկոյն այրեն այն եւ ոչ թէ պատռեն (12):

Ե. Փամպուքեանը թուանշանային ծածկագրերի **(շիֆրերի)** բաժնում զետեղել է նման ծածկագրերի մօտ 30 նմուշ, որոնք մէկը միւսից հետաքրքրական ու արժէքաւոր են: Այստեղ յիշատակելի է 1921 թ. Փետրուարեան ապստամբութեան նախապատրաստութեանը վերաբերող թուանշանային ծածկագիր մի փաստաթուղթ:

Յայտնի է, որ ապստամբութեան նախօրէին՝ փետրուարի 13-ին, Կոտայք գաւառի Ձառ գիւղում հրաւիրուել էր ՀՅԴ Հայաստանի կոմիտէի գաղտնի խորհրդակցութիւն՝ կոմիտէի անդամ Յ. Տէր Յակոբեանի (Իրազեկ) նախագահութեամբ, որի ժամանակ որոշում էր կայացուել խորհրդային իշխանութեան տապալման մասին: Եւ ահա թուանշանային ծածկագրմամբ բնագրով, որը կազմել էր ՀՀ խորհրդարանի նախկին պատգամաւոր Աւետիս Օհանջանեանը, այդ մասին տեղեկացւում էր ՀՅԴ Բիւրոյի միակ չձերբակալուած անդամ Ս. Վրացեանին, որ այդ ժամանակ, Չեկայի հետապնդումներից խոյս տալով, թաքնուել էր Կոնդում՝ իր ծանօթներից մէկի բնակարանում (13): Այդ նոյն օրը, Վրացեանի ասելով, Թ. Խանդեանը թուանշանային ծածկագիր նամակը տարել ու նրան էր յանձնել: Նամակում նշւում էր Հայաստանի կոմիտէի՝ Երեւանում ապստամբութիւն սկսելու որոշման մասին (14):

Փաստենք, որ սոյն թուանշանային ծածկագիրը Է. Փամպուքեանը գտել է Ս. Վրացեանի անձնական թղթածրարներում (Ս.Վ. 142-5 թղթապանակ): Բառարանում բերուած է Աւ. Օհանջանեանի ձեռագրով գրուած թուանշանային ծածկագիրը՝ հայկական այբուբենի իւրաքանչիւր տառն իր ծածկագիր թուով, իսկ դրա տակ նշուած են Ս. Վրացեանին փոխանցուած «բանալի» գաղտնաբառերը:

Այսպիսով, Ե. Փամպուքեանի կազմած ծածկանունների բառարանը վկայում է, որ ՀՅԴ-ի ներսում գործել է այն ժամանակներում յեղափոխական կուսակցութիւններին բնորոշ՝ կապի ու հաղորդակցութեան մի ուրոյն համակարգ, երբ գործնականում կուսակցական ամէն մի կառոյց, գործիչ կամ գործունէութեան դաշտ համարուող վայր ունեցել է իր ծածկանունը: Աւելի՛ն. նոյն անձը կամ ենթական հանգամանքների բերումով ունեցել է մի քանի ծածկանուն:

Ամփոփենք: Երուանդ Փամպուքեանը բազում տարիների պրպտուն եւ տքնաջան հետազօտական աշխատանքի շնորհիւ ընթերցողի սեղանին է դրել մի արժէքաւոր բառարանային աշխատութիւն, որն ինքնատիպ է, մնայուն եւ իր տեսակի մէջ եզակի: Համոզուած ենք, որ այն շատ օգտակար կարող է լինել ՀՅ Դաշնակցութեան պատմութեան, իսկ աւելի լայն առումով՝ 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարասկզբի հայոց պատմութեան հետագայ աւելի խոր եւ համակողմանի ուսումնասիրման համար: Այն մի օգտաբեր ձեռնարկ է՝ հասցէագրուած գալիք սերունդներին, որով առանց մեծ փնտռտուքի հնարաւոր է վեր հանել ՀՅԴ կուսակցութեան, այսինքն՝ տուեալ դարաշրջանի հայոց պատմութեան առանցքային դերակատար ուժի տակաւին բաւարար չլուսաբանուած բազում հարցեր: Քանզի կարելի է ասել, որ սոյն ինքնատիպ բառարանն իր ծածկագիր անուններով մեզ է ներկայանում որպէս ՀՅ Դաշնակցութեան «ծածկագրուած» կամ ժամանակակից լեզուով ասած՝ «քոտաւորուած» պատմութիւն:

**ԱՐԱՐԱՏ Մ. ՅԱԿՈԲԵԱՆ**

*Պատմ. գիտ. դոկտոր*

** Ընդունուել է տպագրութեան, 03.06.2023:*

*(1) Տե՛ս Հայաստանի ազգային արխիւ, Ֆ., 1457, ց. 1, գ. 237, թթ. 53, 55 եւ 58:*

*(2) «Մշակ», Թիֆլիս, 27 յունիսի 1917 թ.:*

*(3) Տե՛ս Փամպուքեան Ե., Հ.Յ. Դաշնակցութեան ծածկանուններու բառարան (անձնանուններ, տեղանուններ, թուանշանային ծածկագրեր), «Վէմ» մատենաշար, թիւ 5, Եր. «Լուսակն», 2023, էջ 12-127, 128-217 եւ 219-251:*

*(4) Օրինակ՝ Յարութիւն Շահրիկեանն ունեցել է 4 ծածկանուն, սակայն որպէս նրա առաւել տիպական ծածկանուն նշուած է Ատոմ-ը (տե՛ս էջ 45 եւ 66), կամ Նիկողայոս Տէր Յովհաննիսեանն ունեցել է 5 ծածկանուն, սակայն նրա ծածկանուան դիմաց նշուած է հանրայայտ Դուման-ը (տե՛ս էջ 57 եւ 77) եւ այլն:*

*(5) Տե՛ս Փամպուքեան Ե., նշվ. աշխ. էջ 138, 142-145, 197, 200, 203, 205, 210:*

*(6) Տե՛ս նոյն տեղում, էջ 13, 16-17, 25-26, 28-30, 33, 38, 43, 59, 61, 118:*

*(7) Տե՛ս նոյն տեղում, էջ 220:*

*(8) Խօսքը գաղտնի թանաքի մասին է:*

*(9) «Քրիստափոր Միքայէլեանի անտիպ նամակները», «Վէմ» մատենաշար, թիւ 1, Եր., «Լուսակն», 2020, էջ 174:*

*(10) Տե՛ս նոյն տեղում:*

*(11) Տե՛ս Փամպուքեան Ե., նշվ. աշխ., էջ 247:*

*(12) «Քրիստափոր Միքայէլեանի անտիպ նամակները», էջ 175*

*(13) Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատ. Զ., Պէյրութ, 1967, էջ 17:*

*(14) Տե՛ս նոյն տեղում: Տե՛ս նաեւ Յակոբեան Ա., ՀՍԽՀ 1921 թ., ներքաղաքական կեանքի պատմութեան հիմնահարցերը հայ պատմագրութեան մէջ, Եր. «Հայկարլի ՍՊՀ» տպագրատուն, 2014, էջ 29:*

# ԱՆԱՒԱՐՏ ԶՐՈՅՑԻ ՄԸ ՄԱՍԻՆ (ԳԱՂԱՓԱՐԱՆՈՒԷՐ ՏՂՈՑ ԿԱՐՕՏՈՎ)

## *ՇԱՆԹ ԵԱԳՈՒՊԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ*



Գաղտնի՞ք մը ըսած կ'ըլլանք, եթէ երբեք յայտնենք, որ դաշնակցական կեանքի ու այդ միջավայրին մէջ գործող կուսակցական ընկերոջ համար, անառարկելի երկու բարեմասնութիւն՝վաստակն ու գաղափարին նուիրուելու յատկութիւնը, իրենց հզօր ազդուութեամբ լոյսին կու գան, երբ ոեւէ ընկեր թէ ընկերուհի այս աշխարհէն կը հեռանայ՝ իր դաշնակցականի խիղճն ու պարտքը կատարածի գոհունակութեամբ:

Սա արդէն կը կազմէ տուեալ ընկերոջ կենդանագիրը, որով կը հպարտանանք եւ կը ներշնչուինք մենք՝ յետնորդ սերունդներս ու միանգամայն ատով կը հարստանայ ՀՅ Դաշնակցութեան ողջ կենսագրութիւնը:

Այս օրերուն, թէեւ վերեւի մատնանշումը իտէալական կրնայ թուիլ շատերու, եւ, սապէս, երազային փափաք՝ ուրիշներու, այդուհանդերձ, իրողութիւնը չի դադրիր ինքզինք պարտադրելէ, աւելի՛ն, իր եզակի լոյսը սփռելէ, որքան ալ մեր կեանքի թէ շրջապատի պայմանները դառնութեամբ յագեցած ըլլան, իսկ կուսակցական թէ ազգային կեանքի մէջ ընդարմացումներ, բացթողումներ ու սխալներ կը յամենան:

Ա՛լ ինչ խօսք հակառակորդներու դժխեմ խօսքերուն մասին, որոնք կը բուսնին մեր շուրջբոլոր եւ կը փորձեն աղաւաղել պայծառ ճշմարտութիւնն անգամ:

Յայտնենք նաեւ, որ խօսքը չի վերաբերիր վաստակի մեծութեան թէ խորութեան, այլ՝ անոր ճշմարտացի ներկայութեան ու ծանրութեան:

Այո՛, շօշափելի ներկայութիւն՝ գործի ընդմէջէն, եւ պատկառելի ծանրութիւն՝ հեղինակադրոշմի յատկութեամբ:

Այլապէս ալ, երբ կ'ընդգծենք գաղափարին նուիրուելու գիտակցական բարձր ունակութիւնը, սա արդէն մարդկային կարողականութեան ու հաւատամքի վսեմ եւ առաքելատիպ որակի մը գոյութեան արտայայտութիւն է, որով կը զատորոշուին շատ շատեր, դաշնակցական ընկերական թէ ազգային միջավայրի մէջ:

Կրնայ առարկուիլ, որ 21-րդ դարուն տակաւին ի զօրո՞ւ են նման մտածումներ, երբ աշխարհով մէկ մարդկութիւնը կը տուայտի նիւթին ծառայելու քաոսին մէջ:

Արդարեւ, այս ստեղծուած քաոսային վիճակէն դուրս գալու եւ գաղափարական աշխարհ մը ունենալու տառապանքին լծուած ու իրաւ դաշնակցականի կերպարին կառչած ընկեր մըն էր Շանթ Եագուպեան, որ ունէր մարդկային իւրայատուկ կազմաւորում, դաշնակցական մտքի ու հաւատամքի եզակի ըմբռնում, գաղափարին նուիրուելու եւ ատով զինուելու քաջ մօտեցում, բայց մանաւանդ՝ գերազանց պաշտամունք եւ ուժեղ համոզում՝ հանդէպ ՀՅ Դաշնակցութեան ողջ պատմութեան, գաղափարախօսութեան, ազգային ըմբռնումներուն եւ անառարկելի դերակատարութեան:

Եւ ահա, համացանցային թէ ուղղակի զրոյցներու երկա՜ր ժամերու ընթացքին, եւ այս կը վկայեն իրեն մօտիկ բազմաթիւ ընկերներ ու հարազատներ անգամ, ան առանց երկմտանքի կը յայտնէր իր խոր համոզումը, աներեր մտածումն ու քննադատութիւնը՝ հանդէպ ազգային ու կուսակցական կեանքի մէջ առկայ տխուր երեւոյթներու եւ ողբերգական վիճակներու:

Ի դէպ, Շանթին համար քննադատութիւնը լոկ խօսքեր չէին, պարզապէս քանի մը մտածում իր շրջապատին փոխանցելու համար, այլ իւրաքանչիւր միտք, որ կը բխէր իր դաշնակցականի աշխարհահայեացքէն, ունէր, կը միտէր դէպի աւելի լաւին ձգտելու, ինքնասրբագրուելու եւ զարգանալու:

Փաստօրէն, ընկեր Շանթ ինչպիսի՛ նիւթի, մտածական հարթակի վրայ թէ խօսքի մէջ ըլլար, անոր սուր ուշադրութենէն չէին վրիպեր երկու երեւոյթ, մարդկային սխալներն ու դաշնակցական ընկերոջ, այսպէս ըսած, «տկարութիւն»-ը: Մեր ընկերոջ համար աններելի յանցանք էին վերոնշեալները, որոնցմէ զերծ պէտք էր մնայինք, թօթափէինք եւ ամուր կառչած մնայինք ՀՅ Դաշնակցութեան դաւանանքին եւ էատարրերուն:

Շանթ Եագուպեանի դաշնակցականի կազմաւորումին առընթեր, ուժեղ ներկայութիւն էր անոր գիտական միտքը, որով սպառազինուած՝ լոյսին կը բերէր իր եզակի խորհուրդները, հաստատակամութիւնն ու աշխարհահայեացքը: Թէեւ զուսպ, յարգալիր եւ շատ անգամ համոզկեր կ'ըլլային արտայայտած մտածումները, այլապէս ալ տարբեր առիթներու ան չէր թաքցներ իր խիստ նկատողութիւնը՝ յառաջ քշելով իր քննական մտքին պաշարը, պարզապէս համեմելու զրոյցին ընթացքն ու թափը:

Յայտնենք, որ Շանթին համար զրոյցի «բռնուիլը» ժամավաճառութիւն չէր, ոչ ալ առիթ՝ինքզինք ներկայացնելու: Այս վարքագծին քաջածանօթ ըլլալով՝ զրուցակից ընկերներ կ'ընդառաջէին անոր եւ, իրենց կարգին, կը նետուէին «մարտադաշտ»: Թէ ինչո՛ւ այս բառը գործածեցինք, պարզապէս ընդգծելու, որ Շանթին հետ զրուցելը, ձեւով մը «մարտ»-եր էին՝ իրար հասկնալու, միտքերը բիւրեղացնելու, համոզումներն ու կեցուածքները առաւել յստակացնելու:

Եւ ահա, երկար ատեն (տարիներ), համացանցային զրոյցներու տեսականի մը ինքզինք կը պարտադրէր, որուն մղիչ ուժն էր մեր ընկերը: Ու յանկարծ, պաստառիդ վրայ կը տեսնէիր նախադասութիւն մը, մտածում թէ խօսք, ղրկուած իր կողմէ, որով բացումը կը կատարէր ան՝ երկարաժամկէտ զրոյցին, որ կը կատարուէր շատ անգամ գրաւոր, ստեղնաշարի օժանդակութեամբ եւ մաքուր հայերէնի ընդգծումով:

Դժուար թէ կարենայիր ազատիլ Շանթի մտածական տարածքի ոստայնէն, ուր ան նրբութեամբ հիւսած կ'ըլլար իր նախադասութիւնները, հարցերը, մտահոգութիւնն ու ապրումները, որոնք էապէս կ'առնչուէին ազգին ու ՀՅ Դաշնակցութեան, անշուշտ, առօրեայ կեանքէն թելադրուած եւ բարիին ու անկեղծին հասնելու տրամադրուած:

Մեր ընկերոջ միտքը մշակուած էր: Արդ, զրուցակիցը պարտաւոր էր հաշուի առնել այս իրականութիւնը եւ կշռադատուած պատասխանէր անոր ընդգծումին: Իր ամբողջ աշխարհը կլանած էր դաշնակցականի կերպարը, վարքագիծը, աշխատանքը, նուիրումին տարողութիւնը եւ ընկերներու գաղափարայնութիւնը: Չէր հանդուրժեր որեւէ թուլութիւն եւ մեղկ վերաբերում, հակառակ այն իրողութեան որ ան քաջ գիտէր իր իսկ դաւանած սկզբունքայնութեան ահռելի ու դժուարին կիրառելիութիւնը:

Ան՝ իբրեւ բնագիտութեան մասնագէտ, զգալի կը դարձնէր իր համոզումին եւ հաւատամքին գիտականութիւնը: ՀՅ Դաշնակցութեան պատմութեան քաջածանօթ մեր ընկերը դրուագներու թէ կեցուածքներու ընդմէջէն կը բացատրէր իր մօտեցումը, եւ ըստ էութեան կ'արժեւորէր ներկայի կուսակցական կեանքը: Գիտէր, կը տեսնէր եւ յաճախ կը մատնանշէր անհատ ընկերներու կողմէ կատարուած թուլութիւնն ու անյարիր վերաբերումները:

Սրամտութեամբ օժտուած մեր ընկերը, յաճախ կ'ակնարկէր մարդկային տկարութեան, խեղճութեան եւ զզուելի վարքագծերու, որոնց վերացման համար, ըստ իր աշխարհահայեացքին, հարկ է աշխուժացնել դաստիարակչական աշխատանքն ու կենդանի գործի մղել՝ մանաւա՛նդ երիտասարդութիւնը:

Շանթ ունէր ազնիւ հոգի ու բարի սիրտ մը, որ դաշնակցականութեամբ կը տրոփէր: Ան նաեւ կը յատկանշուէր իր եզակի գաղափարայնութեամբ, այսինքն՝ գաղափարին նուիրուելու խոր համոզումով: Չէր հանդուրժեր կեղծիքը, սուտն ու խաբեբայութիւնը՝ զանոնք նկատելով մարդկային ողբերգութեան յոռի եւ անմարսելի երեւոյթներ:

Շանթ Եագուպեանի ծառայութիւնը կուսակցական

**ՀԱՄԲԻԿ ՊԻԼԱԼԵԱՆ**

**Շար.ը՝ էջ 6**

# ՄՕՐՍ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԸ

Ես հեռանում էի օտարութեան ճանապարհով.
Մերոնք շշմած էին, անակնկալի էին եկել.
Նայում էին բեկուած, անմխիթար ու լացակում.
Մայրս իր տրտմութեան արցունքներն էր թափում,
Որ լուանամ վէրքերս,
Որ կեանքն էր պատճառել ինձ,
Եւ կը պատճառի այնուհետեւ...

Հրաժեշտիս համբոյրին՝ ասաց.
«Է չեմ տեսնի քեզ»...
Կարօտս
Դեռ
Սրտումս
Է...

Չգիտեմ հայրս ի՞նչ կ'ասէր, եթէ լինէր.
Նա մահացել էր տարիներ առաջ.
Ես իմ ափով փակեցի աչքերը,
Որ դեռ նայում էին ինձ
Ու ոչինչ չէին արտայայտում.
Նա գիտէր, որ կողավեր եմ,
Ինքնասածի,
Չեմ լսի իրեն
Ու չեմ անի այն, ինչ ասում է:

Իսկ եղբօրս մեկնումին՝
Ասել էր.
«Էլ չե՛ս գայ... էլ չեմ տեսնի...»...
Այդպէս եղաւ:

Ես չգիտեմ,
Արդեօք կ'ուզէի չհեռանալ:

Այնպէս չէր,
Որ հեռուն կանչում էր ինձ,
Բայց տեղս այլեւս ինձ դուր չէր գալիս,
Թէեւ չէր էլ հրում,
Բայց դաւադրութեան մի անկիւն կար,
Նախանձութիւններ կային,
Որ բացասաբար էին ազդում վրաս,
Եւ ես, գուցէ որպէս պատասխան,
Հեռանում էի:
Դա այնքան էլ համոզիչ չէ:

Ես հեռանում էի իրագործածներիցս,
Որոնցով գոհ էի,
Որ բազմաթիւներն էին գնահատում,
Արժանաւորութեամբ էի երախտապարտ:
Բայց նախանձութեան թոյնն էլ շատ էր:

Ափսոսում էի,
Որ արածներս էլ չեմ անի...
Էլ չեմ լինի
Մեր գերդաստանային հանդէսներում
Եւ ընկերական հաւաքոյթներում...

Ես հեռանում էի օտարութեան ճանապարհով,
Սրտումս տանում էի
Մի ամբողջ աշխարհ:

Հետս տանում էի մօրս արցունքները
Եւ ընտանիքս,
Ահաւոր երկիւղով,
Որ չթափթփեմ օտարութեան ճանապարհում:

**ԳՐԻՇ ԴԱՒԹԵԱՆ**

*ՔԻՈՔՈՒՇԻՆ ՔԱՐԱԹԷ*

## ՀԱՅԱՍՏԱՆ 15 ՈՍԿԻ ՄԵՏԱԼՆԵՐ ՆՈՒԱՃԵՑ ՔԻՈՔՈՒՇԻՆ ՔԱՐԱԹԷԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ



Շաբաթավերջին, Պուլկարիոյ մայրաքաղաք Սոֆիայի մէջ տեղի ունեցաւ Արեւելեան Եւրոպայի Քիոքուշին քարաթէի ախոյեանութիւնը՝ մասնակցութեամբ 12 երկիրներու:

Հայաստանի Քիոքուշին քարաթէի ֆետերասիոնի 50 հոգինոց պատուիրակութիւնը՝ գլխաւորութեամբ հիմնադիր նախագահ Անդրանիկ Յակոբեանի, փայլուն արդիւնքներ արձանագրեց այս մրցաշարքին: Ստորեւ՝ մետալներ շահած մարզիկներուն անուանացանկը:

**ՈՍԿԻ ՄԵՏԱԼ**

1.- Քրիսթիան Մելիքեան (մարզիչ՝ Անդրանիկ Յակոբեան)
2.- Նայիրա Խուտապաշեան (մարզիչ՝ Անդրանիկ Յակոբեան)
3.- Էլեն Եփրեմեան (մարզիչ՝ Անդրանիկ Յակոբեան)
4.- Վանիկ Յովսէփեան (մարզիչ՝ Անդրանիկ Յակոբեան)
5.- Հայկ Գալստեան (մարզիչ՝ Վիրաբ Մարտիրոսեան)
6.- Պետրոս Ֆարֆարեան (մարզիչ՝ Վիրաբ Մարտիրոսեան)
7.- Մերի Յարութիւնեան (մարզիչ՝ Սարգիս Յակոբեան)
8.- Էրիք Կոստանդեան (մարզիչ՝ Սարգիս Յակոբեան)
9.- Նարեկ Կիրակոսեան (մարզիչ՝ Վարդան Կիրակոսեան)
10.- Միքայէլ Չոպանեան (մարզիչ՝ Վարդան Կիրակոսեան)
11.- Արկադի Կիրակոսեան (մարզիչ՝ Վարդան Կիրակոսեան)
12.- Էտուարտ Ղահրամանեան (մարզիչ՝ Յովհաննէս Սարգսեան)
13.- Գէորգ Յովսէփեան (մարզիչ՝ Յովհաննէս Սարգսեան)
14.- Արեգ Հազարապետեան (մարզիչ՝ Յովհաննէս Սարգսեան)
15.- Մովսէս Պետրոսեան (մարզիչ՝ Յովհաննէս Սարգսեան)

**ԱՐԾԱԹ ՄԵՏԱԼ**

1.- Համլէթ Ստեփանեան (մարզիչ՝ Վիրաբ Մարտիրոսեան)
2.- Աւետ Յարութիւնեան (մարզիչ՝ Վարդան Կիրակոսեան)
3.- Յովիկ Սահակեան (մարզիչ՝ Սարգիս Յակոբեան)

**ՊՐՈՆԶ ՄԵՏԱԼ**

1.- Վարուժան Փոլիպոսեան (մարզիչ՝ Վիրաբ Մարտիրոսեան)
2.- Գուրգէն Էլիզպարեան (մարզիչ՝ Վարդան Կիրակոսեան)
3.- Ալեքս Սահակեան (մարզիչ՝ Յովհաննէս Սարգսեան)

Մովսէս Պետրոսեան «Քաթա» մարզաձեւի 3-րդ դիրքը գրաւեց (մարզիչ՝ Յովհաննէս Սարգսեան):

Էրիք Յակոբեան արժանացաւ «Կամքի ուժ» մրցանակին (մարզիչ՝ Անդրանիկ Յակոբեան):

*«ԷՆ. ՊԻ. ԷՅ.»*

## ԱՅՍՕՐ՝ ԻՆՏԻԱՆԱ - ՊՈՍԹԸՆ ԵՒ ՍԱՔՐԱՄԵՆԹՕ - ՆԻՒ ՕՐԼԻՆԶ




Այսօր կը սկսի «Էն. Պի. Էյ.»-ի «Ին Սիզըն Թուրնըմընթ»-ի քառորդ աւարտականը, որ տեղի կ'ունենայ առաջին անգամ ըլլալով:

Առաջին մրցումին, Ինտիանա Փէյսըրզ կը հիւրընկալէ Պոսթըն Սելթիքսը: Ինտիանա, որ լաւագոյն յարձակողական խաղաոճը կ'որդեգրէ այս տարեշրջանին, իր դէմ ունի «Էն. Պի. Էյ.»-ի ամէնէն ամբողջական խումբերէն Պոսթըն Սելթիքսը: Այս մրցումին յաղթականը իր դէմ պիտի ունենայ Միլուոքի Պաքս - Նիւ Եորք Նիքս մրցումին (վաղը) յաղթականը:

Արեւմտեան շրջանին կողմը, Սաքրամենթօ Քինկզ, Քալիֆորնիոյ մէջ պիտի հիւրընկալէ Նիւ Օրլինզ Փելիքընզը: Այս մրցումին յաղթականը իր դէմ պիտի ունենայ վաղուան Լոս Անճելըս Լէյքըրզ - Ֆէօնիքս Սանզ մրցումին յաղթականը:

## ՍՓԵՐՑԵԱՆ ԵՒ ԹԻԿՆԻԶԵԱՆ ԻՐԵՆՑ ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒՆ ՀԵՏ ԿՈԼԵՐ ՆՇԱՆԱԿԵՑԻՆ



Շաբաթավերջին Ռուսիոյ ախոյեանութեան 17-րդ հանգրուանին Կրասնոտար 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Օրենպուրկը:

45-րդ վայրկեանին Էտուարտ Սփերցեան նշանակեց Կրասնոտարի առաջին կոլը, տարեշրջանի իր 8-րդ կոլը: Մրցակից կազմէն Ստեփան Յովհաննէսեան նշանակեց հաւասարութեան կոլը, ապա Իլզաթ Ախմեթով նշանակեց Կրասնոտարի 2-րդ կոլը, մնալով դասաւորման պարագլուխի դիրքին վրայ, 2 կէտի առաւելութեամբ Զենիթէն, որ կը գրաւէ 2-րդ դիրքը:

Զենիթ 3-1 արդիւնքով պարտութիւն մը կրեց Լոքոմոթիւ Մոսկուայէն, որուն հայազգի մարզիկ Նայիր Թիկնիզեան 88-րդ վայրկեանին նշանակեց Լոքոմոթիւի յաղթանակը հաստատող կոլը: 15 մրցումի ընթացքին Թիկնիզեանի 5-րդ կոլն էր այս: Լոքոմոթիւ կը գրաւէ Ռուսիոյ ախոյեանութեան 6-րդ դիրքը:

*ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ*

## - ՍԻԹԻ ԵՒ ԼԵՒԵՐՔՈՒԶԸՆ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐԵՑԻՆ - ԻՆԹԵՐ ՅԱՂԹԵՑ ՆԱՓՈԼԻԻ ԴԱՇՏԻՆ ՎՐԱՅ - ՊԱՐՍԵԼՈՆԱ ՅԱՂԹԵՑ ԱԹԼԵԹԻՔՈՅԻ

Եւրոպական ֆութպոլի շաբաթավերջը բաւական հետաքրքրական մրցումներով եւ արդիւնքներով լեցուն էր: Անգլիոյ մէջ ախոյեան Մանչեսթըր Սիթի 3-3 արդիւնքով հաւասարութեամբ աւարտեց Թոթենհամի դէմ իր մրցումը, մինչ Լիվըրփուլ 3-2 արդիւնքով ետ կը մնար 81-րդ վայրկեանին, կրցաւ 4-3 արդիւնքով յաղթել: Մանչեսթըր Եունայթըտ շարունակեց իր ոչ համոզիչ ելոյթները եւ 1-0 արդիւնքով պարտուեցաւ Նիւքէսըլի դաշտին վրայ: Գերմանիոյ մէջ, ախոյեան Պայերն Միւնիխ չկրցաւ մրցում կատարել իր դաշտին վրայ, որովհետեւ Միւնիխի ձիւնամրրիկը անշարժացուցած էր ամբողջ շրջանը: Առաջին դիրքը գրաւող Պայեր Լեւերքուզըն իր դաշտին վրայ 1-1 արդիւնքով հաւասարութիւն արձանագրելով Տորթմունտի հետ 2 կէտ կորսնցուց: Իտալիոյ մէջ, ախոյեան Նափոլի, որ Տիեկօ Արմանտօ Մարատոնայի անուան դաշտին վրայ կը հիւրընկալէր Ինթեր Միլանը, 3-0 արդիւնքով ծանր պարտութիւն մը կրեց այս վերջինէն: Սպանիոյ մէջ, Պարսելոնա շնորհիւ Աթլեթիքօ Մատրիտի յառաջապահ Ժոաօ Ֆելիքսի, որ փոխ տրուած է քաթալոններու խումբին, կրցաւ 1-0 արդիւնքով յաղթել նոյնինքն Աթլեթիքօ Մատրիտին եւ գրաւել Մատրիտի կազմի 3-րդ դիրքը:

Ստորեւ կը ներկայացնենք Եւրոպայի լաւագոյն 5 ախոյեանութիւններուն արձանագրուած արդիւնքները եւ դասաւորումները.



**ԱՆԳԼԻԱ**

«Փրեմիեր լիկ»-ի 14-րդ հանգրուանի արդիւնքները.

Պրենթֆորտ - Լիւթըն Թաուն 3-1
Պըրնլի - Շեֆիլտ Եունայթըտ 5-0
Արսենալ - Վուլվըրհեմփթըն Ուանտըրըրզ 2-1
Նոթինկհամ Ֆորեսթ - Էվըրթըն 0-1
Նիւքսըլ - Մանչեսթըր Եունայթըտ 1-0
Չելսի - Պրայթըն 3-2
Ուեսթ Համ - Քրիսթըլ Փելէս 1-1
Լիվըրփուլ - Ֆուլհամ 4-3
Պորնմաութ - Աստոն Վիլա 2-2
Մանչեսթըր Սիթի - Թոթենհամ Հաթսփըրզ 3-3

| ԴԱՍԱՒՈՐՈՒՄ | ԿԷՏ |
|---|---|
| 1.- Արսենալ | 33 (29-11) |
| 2.- Լիվըրփուլ | 31 (32-14) |
| 3.- Մանչեսթըր Սիթի | 30 (36-16) |
| 4.- Աստոն Վիլա | 29 (33-20) |
| 5.- Թոթենհամ | 27 (28-20) |
| ........................................ | |
| 18.- Էվըրթըն | 7 (15-20) |
| 19.- Պըրնլի | 7 (15-32) |
| 20.- Շեֆիլտ Եունայթըտ | 5 (11-39) |




**ԳԵՐՄԱՆԻԱ**

«Պունտըսլիկա»-ի 13-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Տարմշթատ - Քէօլն 0-1
Պոխում - Վոլֆսպուրկ 3-1
Մէօնշընկլատպախ - Հոֆենհայմ 2-1
Լայփցիկ - Հայտընհայմ 2-1
Պայերն Միւնիխ - Ունիոն Պերլին (յետաձգուած)
Շթութկարթ - Վերտըր Պրեմըն 2-0
Մայնց - Ֆրայպուրկ 0-1
Պայեր Լեւերքուզըն - Տորթմունտ 1-1
Աուկզպուրկ - Այնթրախթ Ֆրանքֆորթ 2-1

| ԴԱՍԱՒՈՐՈՒՄ | ԿԷՏ |
|---|---|
| 1.- Պայեր Լեւերքուզըն | 35 (38-11) |
| 2.- Պայերն Միւնիխ | 32 (43-9) |
| 3.- Շթութկարթ | 30 (33-15) |
| 4.- Լայփցիկ | 26 (31-13) |
| 5.- Տորթմունտ | 25 (26-20) |
| ........................................ | |
| 16.- Տարմշթատ | 9 (15-34) |
| 17.- Մայնց | 8 (12-26) |
| 18.- Ունիոն Պերլին | 7 (12-27) |



**ԻՏԱԼԻԱ**

«Սերի Ա.»-ի 14-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Մոնզա - Եուվենթուս 1-2
Ճենովա - Էմփոլի 1-1
Լացիօ Ռոմա - Քալիարի 1-0
Ա. Սէ. Միլան - Ֆրոսինոնէ 3-1
Լեչէ - Պոլոնիա 1-1
Ուտինեզէ - Վերոնա 3-3
Ֆիորենթինա - Սալերնիթանա 3-0
Սասուլօ - Ա. Էս. Ռոմա 1-2
Նափոլի - Ինթեր Միլան 0-3

| ԴԱՍԱՒՈՐՈՒՄ | ԿԷՏ |
|---|---|
| 1.- Ինթեր Միլան | 35 (33-7) |
| 2.- Եուվենթուս | 33 (22-9) |
| 3.- Ա. Սէ. Միլան | 29 (24-15) |
| 4.- Ա. Էս. Ռոմա | 24 (27-16) |
| 5.- Նափոլի | 24 (26-17) |
| ........................................ | |
| 18.- Վերոնա | 10 (12-21) |
| 19.- Քալիարի | 10 (13-26) |
| 20.- Սալերնիթանա | 8 (10-28) |

**ՍՊԱՆԻԱ**

«Լա լիկա»-ի 15-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Լաս Փալմաս - Խեթաֆէ 2-0
Ժիրոնա - Վալենսիա 2-1
Աթլեթիք Պիլպաօ - Ռայօ Վայեքանօ 4-0
Ռէալ Մատրիտ - Կրանատա 2-0
Օսասունա - Ռէալ Սոսիետատ 1-1
Մայորքա - Ալավէս 0-0
Ալմերիա - Ռէալ Պեթիս 0-0
Սեւիա - Վիարէալ 1-1
Պարսելոնա - Աթլեթիքօ Մատրիտ 1-0

| ԴԱՍԱՒՈՐՈՒՄ | ԿԷՏ |
|---|---|
| 1.- Ռէալ Մատրիտ | 38 (33-9) |
| 2.- Ժիրոնա | 38 (34-18) |
| 3.- Պարսելոնա | 34 (28-14) |
| 4.- Աթլեթիքօ Մատրիտ | 31 (30-13) |
| 5.- Աթլեթիք Պիլպաօ | 28 (30-18) |
| ........................................ | |
| 18.- Սելթա | 8 (14-24) |
| 19.- Կրանատա | 7 (19-35) |
| 20.- Ալմերիա | 4 (16-37) |

**ՖՐԱՆՍԱ**

«Լիկ 1»-ի 14-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Ռենս - Սթրազպուրկ 2-1
Լանս - Լիոն 3-2
Նանթ - Նիս 1-0
Լը Հաւր - Փարիզ Սեն Ժերմեն 0-2
Ա. Էս. Մոնաքօ - Մոնփելիէ 2-0
Պրեսթ - Քլերմոն 3-0
Թուլուզ - Լորիան 1-1
Լիլ - Մեձ 2-0
Մարսէյ - Ռեն 2-0

| ԴԱՍԱՒՈՐՈՒՄ | ԿԷՏ |
|---|---|
| 1.- Փարիզ Սեն Ժերմեն | 33 (36-11) |
| 2.- Նիս | 29 (14-5) |
| 3.- Մոնաքօ | 27 (29-19) |
| 4.- Լիլ | 26 (19-11) |
| 5.- Ռենս | 23 (20-19) |
| ........................................ | |
| 16.- Լորիան | 12 (18-25) |
| 17.- Քլերմոն | 10 (9-21) |
| 18.- Լիոն | 7 (11-24) |

- Անգլիոյ ֆետերասիոնի բաժակի Գ. հանգրուանի վիճակաձգութիւնները տեղի ունեցան կիրակի օր: Անոնց համաձայն, Արսենալ պիտի հիւրընկալէ Լիվըրփուլը, 2024-ի սկիզբը: Մանչեսթըր Սիթի պիտի հիւրընկալէ Հատըրսֆիլտ Թաունը, մինչ Մանչեսթըր Եունայթըտ պիտի մեկնի Ուիկընի դաշտը: Թոթենհամ պիտի հիւրընկալէ Պըրնլին: Սանտըրլենտ պիտի հիւրընկալէ Նիւքեսըլը, մինչ Քրիսթըլ Փելէս պիտի հիւրընկալէ Էվըրթընը: Մըրցումները տեղի կ'ունենան 5-էն 8 յունուարին:

Եւրոպայի 5 լաւագոյն ախոյեանութիւններու կոլ սքորըրներու դասաւորման մէջ, Էրլինկ Հաալանտ (Մանչեսթըր Սիթի) 14 կոլ նշանակած է, Հեռի Քէյն (Պայերն Միւնիխ)՝ 18 կոլ, Լաութարօ Մարթինես (Ինթեր Միլան)՝ 13 կոլ, Ճոտ Պելինկհամ (Ռէալ Մատրիտ)՝ 11 կոլ, իսկ Քելիան Էմպափէ (Փարիզ Սեն Ժերմեն)՝ 15 կոլ:

# ՓԵՔԻՆԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ Է ՃԻՆՓԻՆԿ-ԼՈՒՔԱՇԵՆՔՕ ՆԱԽԱՏԵՍՈՒԱԾԷՆ 3 ԱՆԳԱՄ ԵՐԿԱՐ ՏԵՒԱԾ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Չինաստանի ղեկավար Շի Ճինփինկ հանդիպում ունեցած է Պիելոռուսիոյ նախագահ Ալեքսանտր Լուքաշենքոյի հետ: Այս մասին կը հաղորդէ չինական «Սինհուա» լրատու գործակալութիւնը:



«ՌԻԱ Նովոսթի» կը հաղորդէ, որ Պիելոռուսիոյ նախագահը բանակցութիւններու ժամանակ նշած է, որ միակ գլխաւոր հարցը, որ պիտի ուզէր քննարկել, երկկողմանի համագործակցութեան զարգացման նախանշուած ծրագիրներու իրականացման արագութիւնն է:

«Երբ ես կը պատրաստուէի այս այցելութեան եւ գործընկերներուս կը հարցնէի, թէ ի՞նչ հարցեր պէտք է քննարկել, որ ընթացք չեն ստանար, մենք չգտանք մէկ հարց, որ ընթացք չէ ստացած», ըսած է ան:

Լուքաշենքօ յայտարարած է, որ միակ հարցը, որ պիտի ուզէր քննարկել՝ արագութիւնն է:

Պիելոռուսական «Պելթա» կայքը կ'աւելցնէ, որ երկկողմանի հանդիպումը նախատեսուածէն երեք անգամ աւելի երկար տեւած է:

Բանակցութիւններու աւարտին երկու երկիրներու ղեկավարները նուէրներ փոխանակած են, որմէ ետք ալ հանդիպումը շարունակած են աշխատանքային ճաշի ընթացքին:

# ԵՐՐՈՐԴ ՈՒԺԳԻՆ ԵՐԿՐԱՇԱՐԺ ՄԸ ՀԱՐՈՒԱԾԱԾ Է ՖԻԼԻՓԻՆԸ

Ֆիլիփինի ափերուն մօտ տեղի ունեցած է 6,9 աստիճան ուժգնութեամբ երկրաշարժ մը: ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին հաղորդած է Եւրոպական-միջերկրածովեան երկրաբանական կեդրոնը:

Ստորգետնեայ ցնցումներուն կեդրոնը գտնուած է Թակօ քաղաքէն 44 քիլոմեթր դէպի արեւելք, իսկ օճախը եղած է 31 քիլոմեթր խորութեան վրայ:

Կիրակի օր Ֆիլիփինի մէջ տեղի ունեցած էր 6,6 աստիճան ուժգնութեամբ երկրաշարժ մը, որուն օճախը 63 քիլոմեթր խորութեան վրայ էր եւ անոր ցնցումները զգացուած էին Պութան քաղաքէն 148 քիլոմեթր դէպի արեւելք եւ Պիսլիկ քաղաքէն 59 քիլոմեթր հիւսիս-արեւելք:

Այդ երկրաշարժէն քանի մը ժամ առաջ նոյն տարածքին մէջ արձանագրուած էր 4,6 աստիճան ուժգնութեամբ երկրաշարժ մը:

Շաբաթ օր Ֆիլիփինի Մինտանաօ կղզիին վրայ տեղի ունեցած է 7,6 աստիճան ուժգնութեամբ երկրաշարժ մը:

# *ՍՊԻՏԱԿ ՏՈՒՆ.* «ՆԵՐԿԱՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ...»

**Շարունակուած Ա. էջէն**

«Միացեալ Նահանգներ չհրաժարեցան «երկու պետութիւններ»-ու գաղափարէն, սակայն կ'ուզեն տեսնել Պաղեստինեան իշխանութիւն մը, որ կրնայ պէտք եղած բարեփոխումները գործադրել եւ բաւարարել պաղեստինցի ժողովուրդի ձգտումները»:

Իսրայէլեան «Ուալլա» կայքը երէկ հաղորդեց. «Սպիտակ տունէն ամերիկեան պատուիրակութիւն մը այսօր կը հասնի Իսրայէլ՝ Կազայի մէջ պատերազմին «յաջորդող օր»-ը քննարկելու համար»: Կայքը նաեւ նշեց, որ «ամերիկեան պատուիրակութեան կը նախագահէ Միացեալ Նահանգներու փոխնախագահ Քամալա Հարիսի ազգային անվտանգութեան խորհրդատու Ֆիլ Կորտըն»:

Կայքը նշեց, որ կը նախատեսուի, որ ամերիկեան պատուիրակութիւնը հանդիպում ունենայ Իսրայէլի ազգային անվտանգութեան խորհրդատուին եւ Իսրայէլի ռազմավարական հարցերու նախարարին հետ՝ աւելցնելով. «Ամերիկացի պաշտօնատարները Ռամալլայի մէջ հանդիպում պիտի ունենան Պաղեստինեան իշխանութեան նախագահ Մահմուտ Ապպասի հետ»:

Իրանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Նասեր Քենաանի յայտնեց. «Ամերիկան ուղղակի եւ անհերքելի դեր ունի սիոնական գոյացութեան՝ պաղեստինցի ժողովուրդին դէմ գործած ոճիրներուն մէջ»:

«Այսօր ամերիկեան վարչակազմը պատերազմին մէջ կողմ կը նկատուի, սակայն ասիկա կը հակասէ յայտարարութիւնները ամերիկացիներուն, որոնք կ'ըսեն, թէ պատերազմի ընդլայնումը չեն ուզեր եւ Իսրայէլը զգուշացուցած են քաղաքայինները սպաննելէ», յայտնեց Քենաանի:

«Իրան Պաղեստինին զօրակցիլը կը նկատէ հիմնական ու մարդասիրական սկզբունք մը եւ կարեւոր առաջնահերթութիւն մը, եւ ատիկա պէտք է հիմնական սկզբունք ըլլայ բոլոր կառավարութիւններուն եւ միջազգային կազմակերպութիւններուն համար, ներառեալ ՄԱԿ-ը, որ այսօր պատանդ դարձած է Ամերիկայի մօտ», ըսաւ ան:

«ՄԱԿ-ը, միջազգային կազմակերպութիւնները ապացուցեցին, որ աշխարհի վրայ անվտանգութիւնն ու խաղաղութիւնը երաշխաւորելու բաւարար կարողութիւն չունին, եւ Ամերիկան կը չարաշահէ ՄԱԿ-ը հիւրընկալելն ու իր ունեցած ուժը», յայտնեց Իրանի արտաքին գործոց նախարարութեան բանբերը:

Արաբական լիկան երէկ յայտարարեց. «Կազայէն, Այսրյորդանանէն կամ Երուսաղէմէն բռնի տեղահանութիւնը միջազգային ոճիր է եւ միջազգային օրէնքի բացայայտ խախտում»:

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան Պոլսոյ մէջ Իսլամական համագործակցութեան կազմակերպութեան տնտեսական եւ առեւտրական գործակցութեան մնայուն յանձնախումբի 39-րդ նախարարական ժողովի ընթացքին յայտնեց, որ «Կազան համաշխարհային համակարգին համար իսկական քննութեան վերածուեցաւ»՝ նշելով, որ իսրայէլեան ռմբակոծումի զոհերուն երկու երրորդը մանուկներ են:

Ան նշեց, որ Իսրայէլի վարչապետ Պենիամին Նեթանիահու «պատմութեան գիրքերը մուտք գործեց Կազայի ջարդարար տիտղոսով, եւ մենք զինք դատելու նախապատրաստական աշխատանք կը տանինք: Նեթանիահուն պէտք է դատել, ինչպէս դատուեցաւ Սլոպոտան Միլոսեւիչը, որ Պալքաններու ջարդարար տիտղոսը կը կրէր»:

«Իսրայէլ Կազայի մէջ իր ջարդերուն կշռոյթը արագացուց: Ան հիւլէական ռումբ ունի: Այդ հարցը միջազգային մակարդակի վրայ պիտի հետապնդենք եւ պիտի չարտօնենք մոռնալ հարցը հիւլէական զէնքերուն, զորս ունենալը Իսրայէլ իրողապէս հաստատեց», յայտնեց Էրտողան:

«Պաղեստինեան հողը պաղեստինցիներուն է եւ յաւիտեանս այդպէս պիտի մնայ», ըսաւ ան:

Իսրայէլեան բանակի սպայակոյտի պետ Հերցի Հալեւի իսրայէլեան բանակի հարաւային հրամանատարութեան Կազայի զօրամասի կեդրոնատեղի այցելութեան ընթացքին յայտարարեց, որ իսրայէլեան բանակը շաբաթ առաւօտեան Կազայի հարաւին մէջ սկսած է անոր հիւսիսին մէջ կատարած «նոյն գործողութիւնը»՝ շեշտելով, որ անիկա Կազայի հիւսիսին մէջ գործողութիւններէն «նուազ ուժեղ պիտի չըլլայ»:

Հալեւի նաեւ յայտնեց, որ իսրայէլեան բանակը կը շարունակէ հիւսիսային Կազայի մէջ իր գործողութիւնները եւ «զանոնք կը խորացնէ»:

Ան նշեց, որ իսրայէլեան բանակը հիւսիսային Կազայի մէջ Համասի երկու փաղանգներ կազմալուծած է: «Տակաւին հիւսիսային շրջաններուն մէջ գործողութիւնը չաւարտեցինք. կ'աշխատինք խորացնելու ձեռքբերումը եւ յաւելեալ փաղանգներ հարուածելու», աւելցուց իսրայէլեան բանակի սպայակոյտի պետը:

Համաս շարժումի քաղաքական գրասենեակի տեղեկատուական խորհրդատու Թահեր Նունու յայտնեց, որ իսրայէլեան ներքին գաղտնի սպասարկութեան՝ Շապաքի Պաղեստինի, Լիբանանի, Քաթարի եւ Թուրքիոյ մէջ Համասի ղեկավարները հետապնդելու սպառնալիքը քաղաքական ու մարտի դաշտերուն մէջ անոր մատնուած անելին արտացոլացումն է»:

Իսրայէլեան պատկերասփիւռի 12-րդ կայանը հաղորդեց. «Կ'ենթադրուի, որ Համասի մօտ տակաւին 137 կալանաւոր գոյութիւն ունի»:


## Կ'ՈՒԶՈՒԻՆ

Մեքենաներու վրայ աշխատողներ (machine operators)՝ Ինթըրպրենտ-Տըպպայէ ընկերութեան համար:

INTERBRAND S.A.L. (RC, X-TRA, LIBBY'S եւ BONJUS) խմիչքներու եւ հիւթերու շիշեր լեցնող ընկերութիւնը կը յայտարարէ, որ կը փնտռէ իր արտադրութիւնները լեցնող եւ ծրարող մեքենաներու վրայ աշխատողներ՝ ընկերութեան ընդլայնման եւ արդիականացման գործընթացին հետ քայլ պահելու համար:

Գործի պայմաններ.

1) Դիմողները պէտք է ունենան առնուազն պրէօվէի վկայական՝ դպրոցէ կամ թեքնիք հիմնարկէ:
2) Փորձառութիւնը անհրաժեշտ չէ այս գործին համար՝ տրուած ըլլալով, որ ընկերութիւնը կը տրամադրէ յատուկ վարժողական դասընթացքներ:
3) Եթէ դիմողը արդիւնաբերական փորձառութիւն ունի, նոյնիսկ այլ մարզի մէջ, ապա այդ փորձառութիւնը առաւելութիւն կը նկատուի դիմումը ստուգելու ընթացքին:
4) Անհրաժեշտ է պատրաստակամութիւն ցուցաբերել ցերեկային եւ գիշերային ժամեր աշխատելու:
5) Ամսականը կրնայ հասնիլ մինչեւ 500 ամերիկեան տոլարի՝ հիմնուած փորձառութեան, հմտութիւններուն եւ աշխատանքային ժամերուն վրայ:

Դիմումները կ'ընդունուին ընկերութեան Տըպպայէի կեդրոնատեղիին մէջ, եւ գործի կրնան դիմել արական եւ իգական սեռի պատկանողները:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ


# ՀԱՐԱՒԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԻՆ ՎՐԱՅ...

**Շարունակուած Ա. էջէն**



առնչութեամբ Իսրայէլ՝ Եւրոպական Միութեան անդամ երկիրներուն ճամբով յղած է շարք մը պատգամներ, որոնք իրեն փոխանցուած են Եւրոպական Միութեան արտաքին ու անվտանգութեան քաղաքականութեան բարձրագոյն յանձնակատար Ճոզեփ Պորելի եւ Վատիկանի կողմէ:

Պու Հապիպ շեշտեց, որ Լիբանան պէտք է գործադրէ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի թիւ 1701 բանաձեւը՝ աւելցնելով, որ Հըզպալլա պէտք է հիւսիսային Լիթանիի կողմը գտնուի, եւ ոչ հարաւային:

Այս շրջագիծին մէջ անկախ այն իրականութենէն, որ իսրայէլեան օդուժը մնայուն կերպով թռիչքներ գործեց հարաւային Լիբանանի տարբեր շրջաններուն վրայ, իսրայէլեան բանակը ռմբակոծեց Այթա Շաապ, Ռըմէյշ, Եարուն, Միայպիպ, Մէյսել Ժապալ, Տհայրա, Թէյր Հարֆա, Ալմա Շաապ, Լապպունէ, Նաքուրա, Համամես, Մաժիտիէ, Խիամ, Այթարուն, Պլիտա, Քֆարքիլա, Պընթ Ժպէյլ, Մարուն Ռաս, Տէյր Միմաս եւ Ըմ Թութ շրջանները:

Նշենք, որ իսրայէլեան բանակի բանբեր Աւիխայ Ատրաիի յայտնեց, որ Լիբանանի տարբեր շրջաններէն արձակուած հրասանդի ռումբեր թիրախ դարձուցած են Շթուլա բնակեցման վայրը եւ վիրաւորած երեք իսրայէլացի զինուորներ:



Հըզպալլա իր կարգին առաւօտեան կանուխ ժամերուն ռմբակոծեց իսրայէլեան Ռահեպ զինուորական դիրքը:

Կէսօրէ առաջ Դիմադրութեան մարտիկները ռմբակոծեցին Շթուլայի մէջ զինուորական խմբաւորում մը, ինչպէս նաեւ թիրախահար հրթիռներով հարուածեցին Պաղտատի իսրայէլեան զինուորական դիրքը:

Հըզպալլա թիրախ դարձուց նաեւ Քֆարշուպայի բարձունքներուն վրայ գտնուող Ռուէյսեթ Ալամի իսրայէլեան դիրքը:

Հըզպալլա ուղղակի հարուածներ հասցուց նաեւ Մըսքաֆաամի դիրքին մօտակայքը գտնուող իսրայէլեան զինուորական խմբաւորումին՝ օգտագործելով թիրախահար հրթիռներ:

Դիմադրութեան զինուորական տեղեկատուութիւնը հաղորդեց նաեւ, որ Հըզպալլայի մարտիկները թիրախ դարձուցած են Շթուլայի եւ Հանիթայի անտառները:

Յետմիջօրէին Հըզպալլայի մարտիկները ռմբակոծումի թիրախ դարձուցին Պըրքեթ Ռիշայի եւ Ժալ Օլամի իսրայէլեան դիրքերը:


ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ԵՒ ԳԵՐԵՐՋԱՆԻԿ

Տ.Տ. ՌԱՖԱՅԷԼ ՊԵՏՐՈՍ ԻԱ.

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐՔԸ

*ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒ ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ*

ԿԸ ՄԱՏՈՒՑԱՆԷ

ԻՐ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՕԾՄԱՆ, ՏԻՐՈՋ ԱՅՑԻԻՆ ԵՒ ՀԱՅ ԱԶԳԻՆ ԱՆԴԱՍՏԱՆԻՆ ՄԷՋ ԱՌԱՔԵԼԱՋԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ 50-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, 10 Դեկտեմբեր 2023, առաւօտեան ժամը 11-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ-Ս. Եղիա Աթոռանիստ եկեղեցւոյ մէջ:


ԱԶԴԱԿ ՀԵՌ.: (01) 258526 - 260115 - 241274 ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ AZTAG TEL.: (01)258526 - 260115 - 241274 - E-mail: info@aztagdaily.com FAX: (01) 258529 - P.O.BOX: 80860 BOURJ HAMMOUD أزتاك : هاتف : ٢٥٨٥٢٦ ـ ٢٦٠١١٥ ـ ٢٤١٢٧٤ (٠١) فاكس: ٢٥٨٥٢٩ (٠١) - ص.ب: ٨٠٨٦٠ برج حمّود